

ՍԻՈՆ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 7·

ԱՄՍԱԳԻՐ

ՅՈՒԼԻՍ 31·
1871·

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՍՈՒՔԻԱՍՊԱՏՑՈՆ Ս· ՀԱՅՐԱՊԵՏ ԵՒ ԳԵՐԱՊԱՏԻԻ Ս· ՀԱՐՒ

« Յիշեցէք ցառաջնորդս ձեր որք խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ, հայեցեալք ելչս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն »· Եբր· ԺԳ· 7·

Բուռն զգացում մի է, որ երկչոտ ու պատկառազդ բնութեանս հաւատակ կը բռնադատէ զիս այսօր բարձրանալ բանախօսութեան բեմիս վրայ և ի ներկայութեան ակնածելի ակնբիս երկու խօսք ընել։ Այս ըզգացումը նուիրական է, ուստի ինձ համար անդիմադրելի երեւցաւ, ո՛չ միայն մեռացայ իմ բոլոր թերութիւն-ներս և համարձակութիւն առի յա-ւետ Ձեր ներողամտութեան ապա-ւինելով քան թէ իմ յաջողակութեան, զոր չունենալս քաջ գիտեմ։ Ընդհակառակն այս իմ պակասութիւնս թող լեցնէ իմ զգացմանս սրբութիւնը, որ երախտագիտական է, և զոր կը զգամ անմահ բարերարացդ վեհափայլ հանգիստին համար, և թող քաջալերէ զիս Ձեր յօժարական անկնդրտութիւնը, զոր ինձ համար վեհանձնական շնորհք մի կը համարիմ։

Ընդհէն մեր գիտակցութիւնը կ'ուսուցանէ մեզ և մեր խիղճը կը բռնադատէ որ մեզ օգտակար եղող անձանց բարեօք փոխարինութիւն ընենք,

Ամագրոյս նախորդ թուով խոստացած էինք հրատարակել այն ճառը, որ խօսուած է ժառանգաւորաց վարժարանի պարգեւաբաշխութեան օրը, և ահաւասիկ կը կատարենք մեր խոստումնը· Խ·

վան զի այս բնական պարտաւորութիւն մ՚է : Այլ որովհետեւ կը գտնուին մարդիկ , որ ընդդէմ գիտակցութեան , ընդդէմ խղճի և հակառակ բնական պարտաւորութեան կը համարձակին մեռանիլ իրենց այս նուիրական պարտքը , և որովհետեւ գտնուած են ու կը գտնուին այնպիսի մարդկային հրէշներ , որ այլանդակ անձնասիրութեամբ չեն ուզեր ուրիշներն ընդունած բարիքնին ճանչնալ , որք ոչ միայն լոկ ճանաչողութեամբ չեն յարգեր , այլ և ջարդօք և ատելութեամբ ալ կը փոխարինեն , ոչ միայն ի բարին չեն յիշեր , այլ և նախանձու կրնք վարակեալ կը զպարտեն և կը բամբասեն , որով կը վնասանան բարեսէր սրտերը եւ գրեթէ կը սպառի մարդկան սրտին մէջէն բարեսիրութեան գեղեցիկ զգացումը . ուստի՝ մարդկան ազգի բարութեան և առաքինութեանց թշնամի այս ապաշնորհ հրէշներն ուղղելու համար Աստուած սրբագործեց այս բնական պարտաւորութիւնը յատուկ պատուիրելով թէ « Օրհնեսից զՏէր ընդ երեսս ամենայնի . » նմանպէս և ահա Պօղոս Ս . Առաքեալը , որ Բրիստոսի քերնով կը խօսէր , մանաւանդ պատուիրէ մեզ յիշել մեր առաջնորդները որք երախտաւորներ , և որպէս զի որ և իցէ առաջնորդ չի հակընդդիանք , կը մանաւանդ և կը յատկացնէ ըսելով . « Որք խօսեցան Ձեզ զբանն Աստուծոյ . » այս ալ բանական չհետեւելով կը տրվեցընէ նաև թէ զանոնք յիշելով ինչ պէտք է չհինգնք . ուստի կ՚ուսուցանէ , « Հայեցեալք ելս գնացից նոցա նմանողք եղերուք հաւատոյն : »

Բրիստոսի սուրբ Եկեղեցին ալ այս պատուէրին համեմատ առաքինի և աստուածահաճոյ անձանց յիշատակութեան օրեր սահմանած է , նպատակ ունենալով հաւատացելոց հոգեւոր օգուտը , ուր պարտաւոր ենք յիշել նոցա վարքը և անոնց առաքինութենց նմանողք լինել . բայց տեսնամ , որ ժամանակ անցնելով ինչպէս շատ օգտակար կարգադրութիւններ , նոյնպէս և այս գովելի և հարկաւոր կարգադրութիւնը իւր բուն նպատակէն շեղած և լոկ սովորական արարողութիւն է դարձած . վասն զի , իրաւ է որ հաւատարմութեամբ կը կատարենք Եկեղեցւոյ սոյն ամենապատուական ուսանդութիւնը , բայց բնաւ անկէ հոգեւոր օգուտ մը քաղել չենք գիտեր : Մեն ասեն կը ծանենք շատ սրբոց անուններ , առանց լոկ ճշդիւ անոնց գործերը գիտնալու և անոնց առաքինութեան նմանիլ ջանալու : Այսօր ալ Հայաստանեայց սուրբ Եկեղեցին ըստ սովորութեան կատարեց երկու անզուգական բարեբարոյ ոճնը , իսկ մանկունք եկեղեցւոյ մատնաւոր հանդիսիւ կ՚ուզեն վառաւարել իրենց բարեբար առաջնորդոյ քաղցր յիշատակը : Այս երկու ճշմարիտ առաջնորդներն են սուրբն Սահակ և Մեսրովբ , որք երկու լուսապայծառ ջահեր են միշտ սուրբ Եկեղեցւոյ մէջ և Հայ ազգի մատնաւոր պայծառութեան համար մշտավառ արեգակունք : Այլ եթէ ճշմարիտը խօսել հարկ է , յաւօք սրտի կ՚ըսենք , որ տակաւին ասքա իրենց բուն արժանեաց համեմատ նշանակութիւն չեն ստացած , ոչ Եկեղեցւոյ և ոչ Ազգային հանդէսներու մէջ , մինչդեռ խօսքի մի անծանօթ անուններ առաւել նշանաւոր կերպիւ կը ոճնուին , այլ ասքա նշանաւոր են մեզ համար ըստ ամենայնի . սակայն խիստ անյայտ կերպիւ կ՚անցնի իրենց յիշատակը և ազգը չճանչնար իւր բա-

թերաբերը, առաջնորդ են մեզ տքա-
լենց լուսատուր վարդապետութիւն ու
առաքինի գործերովը. ուստի պար-
տաւոր ենք այսօր հանդիսաւոր յիշա-
տակաւ պատուել զանոնք և համա-
ռօտակի նոցա կեանքը քննելով նմա-
նող լինել երկնից առատաձեռնայ
գործոց:

Հայաստան աշխարհը կը տափնա-
պէր խաւարութեանց և անկարգու-
թեանց մէջ, և իբր երկրորդ Հարտուս-
թեան, Ընշակունեան գահանն կոր-
ծանումը մօտեցած էր: Ինանկ թըշ-
նամիներ մէկ կողմէն, արտաքին բըռ-
նաւրներ միւս կողմէն, Հայոց ծու-
ծը ցամքեցնելու և արիւնը քամելու
կը ճգնէին: Յունաց նենգութիւնը
և Պարսից բռնութիւնը շատ մը ներ-
քին խաւարութիւններու և երկպա-
ռակութիւններու պատճառ տալով
ազգը ալեւտնջ ծովու նման կը տա-
տանէր: Ազ նուաղ անկայուն վիճակի
մէջ էր նաեւ ազգի մտաւոր ու քա-
րոյական վիճակն ալ. վասն զի ազգա-
յին լեզուին յաւակութեան համեմատ
նշանագիր չունենալով, Պարսից Ա-
սորւոց և Յունաց գրերը կը գործա-
ծէին, որք չէին կարող ոչ ոք եղածին
պէս մեր ճոխ հնչմանց ձայներուն յար-
մարել: Ազկեղեցւոյ մէջ Սուրբ Գիրքը
օտար լեզուաւ կը կարդացուէր, զոր
ժողովուրդը չհասկնալով չէր կարող
օգուտ քաղել, որով օր աւուր հաւա-
տոյ ջերմութիւնը կը տաքէր, բար-
քերը կ'ապականէին, մինչեւ անգամ
ազգայնութիւնը կործանման վիճակի
մէջ կը գտնուէր:

Ընա այսպիսի վտանգաւոր ժամա-
նակի մէջ տէրերաց վրայ հսկող Նա-
խախնամութիւնը ի գութ շարժեցաւ և
խրկեց մեզ սուրբ Գրիգորի սերունդն
ձիացող վերջին շառաւիղը Պահլա-
ւունի հանճարեղ Սուրէնոց տոհմէն
սուրբն Սահակ պարթեւը, որ իբր
արտաքին բարեվայելչէ կազմութեն
և դիմաց պայծառութեան ու վսե-
մութեան հետ՝ կատարեալ էր նաև
հոգւոյ ազնուութեամբ: Սա իբր
սուրբ Նախնեաց բոլոր պանծալի ա-
ռաքինութեամբք զարդարուած, ակ-
նածելի և պատկառելի էր ամենուն,
ոչ միայն իբր ազգին, այլ և օտարաց
և բարբարոսաց անգամ... արդարև
սուրբն Սահակ, իբր հոյակապ նախ-
նեաց լաւութեանց բոլոր հանգա-
մանքներն իբր անձին վրայ եւ բո-
լոր կենացը մէջ փայլեցուցած լինե-
լով, արժանապէս կոչեցաւ ի բարձր
պատիւ ծայրագոյն քահանայապե-
տութեան, որով իբր առաքինու-
թեանց ընդարձակ առպարէզ բաց-
ուելով, սկսաւ իբր իմաստուն կա-
ռավարութեամբը, ազգու խօսքերովը
և անարատ վարուքը շատ բարեկար-
գութիւններ հաստատել, և ամենուն
հայելի ու բարի վարուց օրինակ հան-
դիսանալ: Իբր Հայոց հարազատ որ-
դին և նոցա նախանձելի բարեմաս-
նութեանց ճշդիւտ նմանող լինելով
իրաւամբ ժառանգեց նոցա վարքն
ու պատիւը. իմաստուն հարտապե-
պետ եղաւ մեր ազգի համար. վասն
զի ազգայնութեան խորհուրդ չէնքը
հաստատուն հիման վրայ կանգնեց.
ուրեմն յաւերժ յիշատակաց արժանի
առաջնորդ մի է սա. ուրեմն նորա
հետացը կարող ենք աներկիւղ հետե-
ւելու, վասն զի զմեզ յանմահութիւն
առաջնորդելու համար հմուտ է եր-
կնից ճանապարհին, հմուտ է նաեւ
երկրի վտանգաց: Իսկ սուրբն Ներ-
սէսը, առաքինի ծնողաց զաւակ, հա-
ւատոյ և քաղաքականութեան իմաս-
տից մէջ քաջավարժ, ուշիմ և հան-
ճարեղ լինելով, նախ մեծին Ներսէ-
սի ժամանակ հայրապետական վեհա-

րանի մէջ նստարուեթեան պաշտօն վա-
րեց և համբաւն հռչակեցաւ, յե-
տոյ երանելւոյն վախճանելէն ղինի՝
մեր Ղուասն անուն հաղարապետին
խնդրանօք և թախանձալիր աղաչանօք
յանձն առաւ Հայոց Թագաւորաց
դիւանադպրութեան պաշտօնը. ուր
տուբը և հաւատարիմ կենօք, հանճա-
րեղ մտօքն ու լեզուագիտութեամբը
աւելնաճելի եղաւ ամենուն եւ շատ
փառք ու պատիւ ստացաւ:

Բայց որովհետեւ նորա հոգին կը
ճանաչէը Աշմարիտ կեանքն ու անե-
ծանելի փառայ յարգը, նորա միտքը
լուսաւորուած էր Աշմարիտ լուսա-
ւորութեամբ, վասն որոյ արդէն առ
ոչինչ կը համարէր իրեն տրուած պա-
տիւները, և կարծես այն ամենը իւր
մաքրասուն հոգւոյն տապտութիւն
կը պատճառէին, ուստի ձանձրացած
կենցաղոյս անտի հոգերէն, Յիսուսի
քաղցր լուծն ընտրելով առանձնացաւ
և աշակերտներ ժողովելով կ'ուսու-
ցանէր նոցա՝ աստուածային օրէնք-
ներն ու յաւիտենական խնամատա-
րութիւնը: Այս նոր վիճակը մեծ ազ-
դեցութիւն ըրաւ իւր վրայ, վասն զի
փորձով տեսաւ որ օտար տուեր գոր-
ծանելով գրականութիւնը ամուլ կը
մնար կամ խիստ դանդաղ և դժուա-
րաւ կը յառաջանար: Այս մտային
քայլերուս հաշմութիւնը տեսաւ Ան-
բոլը և սաստիկ վշտացաւ. ուստի այս
առանձնութեան մէջ մեծամեծ գոր-
ծեր արտադրելու համար վեհմ խոր-
հուրդներ յղացաւ, իւր անբիծ հո-
գին աշխարհային զբաղումներէ թե-
թեւացած՝ կը թեղադրէ իրեն, որ ազգին
հիմնական պետքն հոգայ և անոր
հաստատուն բարիք մտատարարէ,
նշանադիր հնարելով: Այս արդարեւ
տուբը Անտոնեայ պէս բանիբուն անձ
մի այսպիսի մեծ, և փառաւոր գործ
մը կատարելու արժանի էր, վասն զի
խորհնացեան ըսածին պէս՝ "Իւր ժա-
"մանակի բոլոր առաքինիներէն աւելի
"գերազանց էր. ամբարտաւանութեան
"ու մարդահաճութիւնը նորա վա-
"րուց մէջ չկրցին մտնել, այլ ընդ-
"հակառակն հեղ, բարեխոհուրդ և
"բարեացակամ էր, երկնային բնու-
"թեամբ զարդարուած կը փայլէր,
"քանզի հրեշտակի նման կերպարանք
"ունէր, մտօք բեղմնաւոր, բանիւք
"պայծառ և գործով ժուժկալ էր,
"մարմնով խիստ վայելչադէմ, խոր-
"հրդակցութեամբ մեծ, հաւատքով
"ուղիղ, յուսով համբերող, սիրով
"անկեղծ և անձանձրոյթ ուսուցիչ
"էր":

Ս. Անտոնեայ այսչափ փառաւոր
և գովելի բարեմտանութեամբ զար-
դարուած լինելը՝ այնպիսի հաւատա-
րիմ Աշմարտասէր անձէ մը վկայուե-
լով ամեն տարակոյս կը փարատէ. մա-
նաւանդ եթէ ստոյգ է որ պատճա-
ռին որպիսութիւնը գործէն կը ճանչ-
ցուի, ահա նոյն ալեհուառմիտ, առա-
քինի և հանճարեղ ծերունին, այս
վկայութիւնը տուող Սոկրատ խորհ-
նացին, Անտոնեայ քաղմամիւս աշա-
կերտներէն մին է: Արդ ահա յայտ-
նապէս տեսանք որ Սահակ և Սես-
րոպ Աշմարիտ և արժանաւոր առաջ-
նորդներ են մեզ: Այս մի է որ այս-
պիսի բանիւ և արդեամբք վկայուած
խմաստուն և բարեսէր առաջնորդաց
նմանիլ չուզէ, որոց առաջնորդած
ուղին լաւ ամենայնի ապահով է:
Բայց մենք քիչ մ' ալ խօսքերնիս յա-
ռաջ տանինք:

Սահակ և Սեսրոպ երկնաւոր
վարդապետին Աշմարիտ աշակերտք,
անձնադիր և քաջ հովուին անվեհեր
նմանողք, իրենց անձնուէր վտանգովը
ազգին փրկութիւնը կը հոգան: Այն

ղի Սահակ պարսկային գաղանին, Շապուհ բռնակալին, ժանեաց կը մատնեի. այլ իբր նոր Դանիէլ կը փրկուի գիշատիչ առիւծներու մահատու ձիրաններէն, և իբր առաջարկումէն ընդունելով փառք կը դառնայ իբր հայրապետական ամիռը։

Իսկ Մեսրովբ լսելով Սահակայ հայրապետական ամիռն նստիլը, ուրախութեամբ լեցուած կուգայ նորա մօտ և սիրան անհանգիստ ընդդէմ խորհուրդը կը յայտնէ, հայերէն դիր ջլլալըն ախտուր հետեւանքը կը բացատրէ և գիր հնարելու առաջարկումէն կ'ընէ, և ահա սուրբ Հայրապետը իւր խորհրդոց համակիր և քաջալերը առնելով երկնային բերկրութեամբ կը լեցուի. իբրեւ պղպատա և կայծքար իրար կ'ընդհարին և մշուշթեան մէջ լոյս կը ցոլացընեն, համակամ խորհրդակցութիւնը կամ բարի խորհրդոց միացումը փրկութի և կեանք կուտայ։

Այս առթիւ չմոռնանք նաեւ յիշել Աստուածպատճ ազնուամիտ եւ ուսումնասէր Թագաւորը, որ բանիւ և արդեամբ ձեռնտու եղաւ սրբոց մեծ և կարեւոր խորհրդոյն։

Յետ այսորիկ սուրբն Մեսրովբ վարդապետական բարձր պաշտօնն ընդունելով եւ սուրբ Հայրապետին հետ եռանդեամբ ազօթելով վերըսուրբ առանձնացաւ և անոանելի աշխատութեամբ սկսաւ զբաղիլ։

Սուրբն Սահակ իմաստուն և պերճախօսն վարդապետութեամբ ժողովրդեան վարքը ուղղելու և սրտերը սրբելու կ'աշխատի, եկեղեցւոյ մանկանց սիրան ու միտքը գալիք փրկութիւնն ընդունելու կը պատրաստէ, իբր նոր Յարաքեաւ ձայն բարբառոյ յանապատի կը տեսնուի Հայաստանի մէջ։

Իսկ սուրբն Մեսրովբ գիշեր և ցորեկ ճգնութեամբ, պահօք և աղօթիւք կ'աշխատի գրեր ստեղծել, և տեսնելով որ մխայնակ ի գլուխ հանել անհնար կը լինի, խոնարհ հոգւով և խոհեմ դատողութեամբ իմաստնոց խորհրդոյն կը դիմէ, ծով ու ցամաք անցնելով անպայման վտանգներու դէմ կը մաքառի։ Միջագետք, Ասորիք, Իւզանդիան իւր սովորական ճանապարհները կը լինին. աղգին փրկութեանը ծարաւած աստ և անդ կը դիմէ աներկիւղ. ոչ ծովէին կը վախնայ և ոչ ցուրտէն, ոչ աւազակ ներէ և ոչ որ և իցէ պատահարէ։ վասն զի երեք անընկճելի զէնքեր և ամենաբոյժ դեղեր իւր հետն ունէր, այսինքն հաւատոյ անխորտակելի վահանը, յուսոյ անդրդուելի խարիսխը և սիրոյ կենդանացուցիչ ջերմութիւնը. ասոր Թողունք հապա ասուածեղէն տառից իմաստութեան բոլոր ապառաղնութիւնները, որովք զպահաւորուած ազգին փրկութեան համար վտանգներու դէմ շահատակիլ կը փութայ։

Այս ամէն դժուարութեանց սիրոյ կը հաւքերէ և արիաբար կը տակայ, կ'անցնի փուշերուն և քարերուն վրայէն, իբր անուշահոտ ծաղկանց վրայէն, սակայն բոլոր ճիգը ապարդիւն կը լինի. քանզի մարդկային բոլոր հնարքը կը տկարանան եւ իւր բաղձանքն ապարդիւն կը մնայ, թերեւս Նախախնամութենէն այսպէս անօրինուած էր, որպէս զի ինքն ըլլայ այս փառաց ժառանգ ի վարձ իւր վսեմ առաքինութեանց։

Ասոր մարդիկներէն ակնկալութիւն չմնալով կը դիմէ վերոյին առաւածային շնորհաց օգնութեան. և Աստուած, որ մարդկան սրտի ուղղութեան և անխանգ ջանասիրութե

նայելով քնաւ անվարձ չի թողուր, (մանաւանդ երբ ան մարդկային կարողութիւնը կը տկարանայ, իսկոյն կը ղրկէ իւր մեծ զօրութիւնը և կը պաշտպանէ բարի աշխատութիւնը) օգնութեան հասաւ ահա և սկզբան Աեսրովբայ, վասն զի մինչդեռ երանելին, իւր բորբոքեալ խորհրդոյ մէջ հընդհատած՝ քիչ էր մնացեր որ տոչորի և սպառի, մինչդեռ այս եռանդով վառուած աղօթքի մէջ էր, յանկարծ լուսոյ ճառագայթներ կը սփռին իւր չորս կողմը։ Ես ինչ զարմանք, անպատում հրճուանօք լեցուած կը դիտէ և ահա ան ձեռք մի կը տեսնէ, որ վառի վրայ կը գծէր այն տառերը որուն կը տենչար իւր հոգին, բայց առաւել զարմանալին այն է, որ այս աքանչելի տեսլեամբ, թէ տառերուն ձեւերը, թէ հնչմունքը և թէ փոփոխութեան հանգամանքները այնպէս կը տպաւորուին սրտին վրայ, որ կարծես թէ տարիներով վարժած և ուսանկացած էր։ Ջերմեռանդն սիրով և երախտագիտութեամբ հնորհակալ կը լինի Տիրոջմէն, և այսպէս ընդունելով երկնապարգև տառերը կը փութայ երանելին շուտով սովրեցընել իւր հետ գանուող ուշիմ աշակերտաց և կը սկսին զրքեր թարգմանել, քանզի սաստիկ ձմեռն լինելուն չէին կարող անմիջապէս Հայաստան դառնալ։

Իսկ ժամանակն հասնելուն պէս աճապարանօք կ'ուղևորի դէպ ի Հայաստան տանել իւր նորագիւտ գանձը և ամբաւել Հայ մանկտւցն մէջ տաց հաւատարիմ գանձարանին մէջ։

Ահա կուգայ Աեսրովբ իւր հետ ունենալով երկնատուր գրերը և նոյն գրերով թարգմանուած նոր կտակարանը, և ուրիշ գրքեր։ Օ՜ն ուրեմն, ելէք ընդառաջ ազաւակունք Հայաստանի, ողջունեցէք ձեր լոյսը, գրկեցէք ձեր կեանքը և սիրով ընդունեցէք ձեր բարոյական փրկութիւնը։

Հասաւ Աեսրովբայ գալաւեան լուրը Հայաստան. սուրբն Սահակ և արքայն Վռամշապուհ ըսելով գրոց գիւտը, անպատում ուրախութեամբ կը լեցուին. կը մտնէ սուրբն Աեսրովբ Հայաստան, և վառօք ու պատուով կ'ընդունուի. կը բացուին այնուհետեւ բազմաթիւ դպրոցներ և առատապէս կը վայելէ Հայ մանկտին իւր մայրենի լեզուին քաղցրութիւնը և հոգի կ'առնու Սուրբ Գրոց ընթերցմամբը։ Արդեօք արժան է յիշել այս տեղ Յունաց նենգամիտ չարութիւնը, որ չընթողին և երկար ժամանակ արգելք եղան երանելեաց։ Յոյնք ազգակործան խորհրդով չէին թողուր որ իրենց իշխանութեան տակ եղող Հայերուն սովրեցընեն իրենց սեպհական գրերը. բայց ինչ հարկ կայ յիշել նոցա այս ելլայարատեայ գործը և յուզել ազգասէր սրտերը, քանի որ այն արիասիրտ արիւնն հովիւներուն, անվհատ և ժրաջան մշակք այգւոյն Աիկեղեցւոյ սուրբն Սահակ և Աեսրովբ՝ ջանիք, թախանձանօք և խոհական միջոցներով յաջողեցան իմաստութեամբ յաղթահարել նենգութեան և այն տեղ ծաւալեցին Հայ գրականութիւնը. . . . .

Թողունք այս ամենը և տեսնենք թէ ուր կը սլանայ Հայաստանի հրեշտակը, իւր հոգւոյն թեթեւ թեւերուն վրայ առած լոյսն ու կեանքը՝ ուր կը դիմէ արդեօք։ Օ՜արմանալի հակապատկեր են Յոյնք և Աեսրովբ, Յոյնք մեր գրերը մեղնէ կ'արգիլեն, բայց ահա Աեսրովբ կը փութայ Վրաստան և Աղուանից աշխարհը, նոցա լեզուին հանդամանաց համե-

մաս նշանագրեր կը ստեղծէ, կ'ուսուցանէ և կը կրթէ։ Այն վայրենամիտ Աղաւանից ազգը աննկարագրելի արագութեամբ կը փոխուի, ուսմամբ և կրթութեամբ կը զարգանայ, կարճ խօսքով, ըստ Առաքելոյն՝ «Ամեն կողմ կը վազէ Աստուած, ամեն տեղ կը հաստի Քրիստոսի Աւետարանաւ, և ամեն դռներ կը բացուին Տերամբ իւր առջեւ, Աստուծոյ գիտութեան անուշահոտութիւը ամեն տեղ կը ծաւալէր» ։ Բ։ Կոր։ Բ։ 12–14։ Ժողովուրդը իւր լեզուով կը լսէր Աւետեաց պաշտամունքը և կը սովրեր Սուրբ Գիրքը, անխոնջ աշխատութեամբ և անհատնում մատակարարութեամբ սրբոյն Աստուածայ։ Չեզ կը թողում հիմա Աստուածայ և Յունաց մէջ ուղիղ համեմատութիւն ընելը։

Հայաստան աշխարհի նոր Սովսէսներ եղան Սահակ և Աստուած, որ ժողովուրդը տգիտութենէ և բռնութեան փարատնի ձեռքէն ազատելով առաջնորդեցին Ճշմարիտ աստուածութեան և աստուածային իմաստութեան Աւետեաց երկիրը. ձեղքեցին, պատուեցին նախանձու և բռնութեան ծովերը և անվնաս անցուցին Հայ մանկտին յայն կողմն ապահովութեան, և Թողին, որ աղգային աղատ գրականութեան մէջ աներկիւղ ձեմեն։ Մովսէս ապառաժը պատուեց և ջուր հանեց, և սոքա ապառաժէն աւելի կարծր քարացեալ սրտերը կակղացուցին, յորոց սկսաւ բղխիլ աստուածային իմաստութեան կենդանարար ջուրը։

Ըդարձեալ՝ յաւերժական յիշատակաց արժանի են Սահակ և Աստուած, ոչ միայն իրենց վսեմ առաքինութենէ, վարուց սրբութեան և գովելի աշխատութեան համար, որով երկուքն ալ երկնային տեսլեան արժանացան . . . . . այլ և նոյն իսկ իրենց գերազանց և անհամեմատ արդեանց համար, որով մինչ ցարդ անմահ մնացին և ցյաւիտեան պիտի մնան. վասն զի ահա կը տեսնենք, որ նոքա միշտ մեզ հետ կը խօսին և Աստուծոյ խօսքը մեզ կ'աւանդեն, թէ իրենց այլ և այլ գրուածքներովին ու հոգեբուղխ ձառերով Աստուծոյ կամքը մեզ կ'ուսուցանեն, և թէ իրենց արդեամբը Աստղիկեան և Աբգարեան հայերէն կը խօսին մեզ հետ։ Ահա նոյն ինքն ամենաբարին Աստուած կը հաճի իւր կամքը հայերէն գրով և հայերէն լեզուաւ յայտնել մեզ։ Աստուածաշունչ Սուրբ Գիրքը հին և նոր կտակարանը հայերէն կը կարդանք, և որո՞ւն պատուական եմք այս ընտիքը, եթէ ոչ սրբոյն Սահակայ և Աստուածայ։

Բայց ինչո՞ւ կ'երկարեմ խօսքս, մինչ նոքա հոգեկուեալու համար իմ տկար լեզուիս կը կարօտին. միթէ իմ ցուրտ ու ցամաք գրիչս կարո՞ղ է նոցա արժանեաց համեմատ ներբողեան հիւսելու. քաւ լիցի. մանաւանդ որ պաշտօնս ալ այդ չէ։ Ուրեմն կարճ խօսքով ըսենք, որ ես ուղիղ առաջնորդութիւնը՝ գիտուն ու իմաստուն հայրերէն ըլան՝ որո՞ւ կարող ենք վստահիլ. և ահա այս երանելիք մեր Ճշմարիտ Հայրերն են, որք երեք կերպով ծնած են զմեզ. ծնան յաղգութիւն, ծնան ի կրօնս և ծնան յիմաստութիւն։ Ծնան յաղգութիւն, վասն զի շատ անգամ աքնեցան և անխոնջ ջանացին աղգութիւնն անկորուստ պահելու, և եթէ մինչ ցարդ կ'անլինք իբրեւ ազգ, այն եւս նոցա իմաստուն հոգածողութենէ արդիւնքն է։ Դարձեալ, ծնան զմեզ ի կրօնս, վասն զի միշտ վարդապետեցին Ճշմարիտ հաւատքը և միշտ իրենց կեն-

դանի խօսքերովը կ'ուսուցանեն մեզ քրիստոնէութիւնը. կենաց խօսքը կ'աւանդեն մեզ եւ կը սնուցանեն հոգեւոր կաթամբ։ Իսկ իմաստասիրութեան եւ գրականութեան մասին ասցա հայր եւ հեղինակ լինելն ալ կարող է ուրանալ։ Արդի աշխատութեան քաղցր պտուղն է զոր կը վայելէ այսօր Հայկազն մանկտին։ Կեղեցւոյ։ Ալ կը սովրեցընէ մեզ դիւրութեամբ ամեն ուսում եւ գիտութիւնն մեր յատուկ գրով եւ մեր լեզուով։ Արդեւնքն ալ է, որ այսօր Հելլենացին Հոմեր, Պատինն Վիրգիլ եւ ուրիշ ազգաց շատ ոտանաւորիչներ եւ իմաստասէրներ հայերէն կը խօսին մեզ հետ։ Վերջապէս, որպէս ընորհիւն է որ այսօր քիչ ժամանակուան մէջ շատ բաներու կը հմտանանք, եթէ ոչ մեր աստուածասէր, հայրենասէր եւ ազգասէր Հարց սրբոյն Սահակայ եւ Մեսրովբայ։ Ինչ այսչափ է ասցա երախտիքը. այսպէս առաջնորդ հանդիսացան մեզ, եւ թէ պէտ դեռ շատ յիշատակաց արժանի գործեր ունին, բայց մենք ժամանակին աղաւթենէն, մանաւանդ ունինք դրաց Ձանձրութիւնն առթելու երկիւղն ստիպուած՝ խիստ համառօտել ըսանայինք։

Արդ՝ քանի որ յայտնապէս տեսանք թէ Սահակ եւ Մեսրովբ Հշմարիտ հայր եւ իմաստուն առաջնորդ են մեզ երկնից Ճանապարհին եւ աշխարհի վրայանգաց հմուտ. քանի որ Հոգ ազգը միշտ պիտի վայելէ ասցա արդիւնքը, ուրեմն արդարեւ յիշատակաց արժանի են։ Այլ ինչ օգուտ լոկ յիշատակութենէն եթէ չաշխատինք նոցա նմանելու, եթէ չը ջանանք նոցա աշխատութիւնն արդիւնաւորելու, եթէ ամեն մեկնումնիս մեր անձնական վարքովը նոցա անմահ Ճակտին վրայ չը փութանք պսակ հիւսելու, եւ մեր սրտից մէջ անկործան կոթող կանգնելու. վասն զի առաքինի Հոգի մինչեւ գերեզմանի արձանը եւ յաղթութեան ամենէն փառաւոր մշտատեւ կոթողը իրենց անունը անմահացընող հարազատ որդիքն են, որք միայն ըստ ամենայնի նոցա նմանելով արժանաւոր յիշատակներ կանգնած կը լինին։

Ուրեմն անհրաժեշտ պարտաւորութիւն է մեզ՝ ամեն հայ անհատի, ոչ միայն երախտագիտութեամբ յիշել եւ հռչակել այսպիսի անզուգական բարերարաց անունն ու գործը, այլ եւ գովելի նախանձաւորութեամբ նմանիլ նոցա, հաւատով, վարուք եւ գործովք, որովք միայն կարող կը լինինք փոխարինել նոցա բարեաց, եւ հարազատ որդի համարուիլ։ Արդ՝ եթէ կը սարծինք որ մեր Նախնեաց որդիքն ենք, ուրեմն նմանինք նոցա ըստ ամենայնի՝ ի վատս եւ՝ ի պատիւ միոյն Աստուծոյ, որ պիտէ արժանապէս պսակել առաքինի եւ բարեսէր սրտերը։

1871 Յունիս 17 Կարապետ Յ. Մարիոեան։

ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՑ ԽՆԴԻՐՔ

(Շարունակութիւն տես թիւ 6։)

"Յայտնուեցաւ ուրեմն Տէրք իմ, | ատինաց տրտքը, ըսաւ Աբրահամ Պատրիարքը, և տեսաք ահա անոնց չարժմունքները, իմացաք անոնց խօսած խորամանկ խօսքերուն յարդը. որոշեցէք ուրեմն և դարձուցէք իրաւունքը իւր սեփհական տիրոջը, եւ պատուիրեցէք ըլկոլին որ մէկ մ'ալ չյանդգնի այսպիսի յափշտակութիւն ներ ընելու։

Յառեցաւ ասել Աբրահամ Պատրիարքն, թէ "Վխտեմ Տէրք իմ, դարձեալ Յրանչիսկեանք. չպիտի ըլ-լանին իրենց յայտնի անիրաւութիւնը ճանաչելու, և պիտի պնդեն, թէ այն տեղը ճանապարհ է, և չպիտի ղիջանին իրենց անիրաւութեամբ չինած դուռները գոցելու, եւ իրենց կից ճանապարհին կողմը դարձնելու. բայց և այնպէս Տէրք իմ, դարձեալ պիտի պատասխանեմ իրենց, Տէրութեան օրէնքին համեմատ. ուրեմն կը խնդրեմ Տէրութեան կանոնին համեմատ և դատաստանական օրինաց համաձայն պատասխան տուէք ինձ դուք Տէրք իմ, և Պ. Հիւպատոս եւս ըստ իւրեանց Տէրութեան օրինաց պատասխանեցէք ինձ ձշմարիտ; որպէս կը պահանջէ արդարութիւնն" - ըսելով սկսաւ այսպէս։

"Նախ՝ Յրանչիսկեանց ըսած և պնդած խօսքերնուն համեմատ գործին հակառակ կողմը բռնենք, և ըսենք թէ նոյն իսկ իրենց ըսած տեղը ճանապարհ եղած ըլլայ կամ ճանապարհ է, նա եւ իրենց անիրաւութիւնը աւելի դատապարտելի ընելու համար բոլոր աշխարհի առջեւ, դիւցուք թէ նոյն տեղը Թադաւորական ճանապարհ Խրէ֊եա֊մ է. բայց և այնպէս Յրանչիսկեանք դատը երբէք չեն կրնար վաստկիլ. վասն զի իրենց Թագած դռնեըուն և ըսած ճանապարհին մէջ տեղւ գտնուած հողը Թէ և մէկ Թիզ ըլլայ, իմ ազգային սեպհականութիւնս է, ըստ օրինաց իրաւունք չունիմ ըսելու Թէ իմ գետնիս վրայէն մի անցնիր. իմ սեպհականութեանս վրայ մի կոխեր, երբէք հրամայ չնիմ. ինչ կ'ըսէ դատաստանը, արդեօք կը Թոյլատրէ այդպիսեաց։

"Վերկրորդ՝ քանի որ նոյն դրան առջեւը եղած գետինն իմ սեպհականութիւնս է, քանի որ | ատինաց գերեզմանատան հիւսիսակողմն հատկացած պողոտայ կայ, այսինքն Խրէ֊եա֊մ, իրենց ճանապարհ տալու պարտաւորութենէ ազատ եմ ըստ Տէրութեան օրինաց. ուրեմն և ես այնոր քաշած պատին ձիշտ առջեւէն իմ գերեզմանատանս պատը երբ կ'ուզեմ, կրնամ քաշել Տէրութեան օրինաց համեմատ մէկ ձեռք սղմելու չափ անոնց և մեր պատին մէջ միջոց ձգելով մի կրնայ ցնս արգելուլ, քանի որ իմ ըրածս | ատինաց ըրածին պէս օրինաց և արդարութեան դէմ չէ։"

Համարեւ Թէ միաբերան պատասխանեցին Նոյին | սեմութիւնը, Թէ Քանի որ հողին տէրը արտօնութիւն չտար իւր հողին վրայէն անցնիլ, դրան տէրը իր դռնէն դուրս չկրնար ոտք կոխել. բայց եթէ ուրիշ կողմանէ դուռ բանալու դիւրութիւն չունենայ, այն առեն իրաւամբ կրնայ պահանջել նոյն հողին տիրոջմէն իրեն ճանապարհի համար ըստ բաւականին գետին, և այն ալ Թէ բռնութեամբ, այլ համոզելով որ և իցէ կերպիւ, նոյն հողին տէրն ալ պարտաւոր է ամենայն սիրով հնազանդիլ և ընդհարել. բայց եթէ | ատինք քովերնին հաստատած

պաղատագ ունին, ինչպէս որ դուք կ'ըսէք և կը սիրէք, երբէք չեն կրնար իրաւունք ունենալ. դուք ձեր սեպհական հողին վրայ կրնաք ձեր պատը քաշել երբ որ ուզէք մէկ ձեռք սրճելու չափ միջոց ձգելով. Տէրութիւն օրինաց համեմատ | ատինք ձեռվին ուզած գետինը ուրիշ կերպով չեն կրնար ստանալ, եթէ ոչ վոխարինելով կամ ծախու առնելով և այն ձեր ամենայն յօժարութեամբը նուէր ընելու միջոց գտնելով։—

"Ուրեմն, ըսաւ Սրբազան Պատրիարքը, այս որ աստիճան անիրաւութիւն է Գրանչիսկեանց մեզ ըրածները, և որ աստիճան անհամականալի է մեր Խարեխնամ Կայսեր հպատակասէր բարի կամացը հակառակ Տէրութեան պաշտօնէից կողմանէ ցոյց ուած թոյլատրութիւնն որ Ֆայոց ազգին արդար սեպհականութեան իրաւունքները այսպէս իր աչքին դիմացը ոտնակոխ եղած է և կ'ըլլայ. և արդեօք դեռ պիտի շարունակուի, այր վասն շնաբեալ մնայեր եմ թէ, եթէ դարձեալ պատահի, որ ազգի, և որ տերութեան օրինաց կամ դատաստանի դիմեմ։ Ես դուք Պ. Ֆիւպատոս արդեօք տեսած էք այսպէս արդար և սեպհական իրաւանց չարաչար բռնաբարուիլը. արդեօք ձեր Տէրութեն կանոնները կը ներէն, կամ ձեր Տէրութեան մէջ օտար Տէրութեան հպատակները այսպէս յափշտակութիւններ կրնան ընել. և ընելու ալ ըլլան, արդեօք կարելի է Թոյլատրէք, կ'ապաշխեմ պատմեցէք՝ եթէ ունիք այսպէս անօրինակ անիրաւութեն նմանը։

"Այս միջոցին Պեմ. Պալի փաշան գործին բացատրութիւնն ուրիշ եղանակի դարձընել ուզելով ըսաւ. "Փաթրիք ատտում, այս | ատինաց պատը չքաշուած, անոր տեղը ինչ կար, և այս գործին սկիզբը ինչպէս սկսուեցաւ, որ այսքան գժտութեան պատճառ տուած է, եթէ կարելի է, մեզ պատմէ։

"Ուրեմն գործը նորէն սիրտի ընկերնք, ըսաւ Պ. Պատրիարքը, վնաս չունի, դարձեալ Ձեր Պեմոլեթէ ըսելը պիտի ցաւի, բայց քանի որ դուք այդ ձանձրութիւնը յանձն կ'առնուք տանիլ, ինձ ուրիշ բան չմնար, միայն սիրով յանձն առնուլ պատմել։ Պեմոլեթէ Տեարը, ըսաւ, նոյն պատին տեղը արդէն մէկ կանգուն հաստութեամբ հողին երեսին հաւասար պատ մի կար կիսովը քաշուած, կիսովը կ'ըսեմ, այսինքն՝ կէսը մեր և կէսը | ատինաց; այսինքն՝ մեր կողմին երեսը մեզ կը վերաբերէր, իրենց կողմի երեսը՝ իրենց. և նոյն պատը որ յատակին գրեթէ հաւասար էր, իսկ մէջ տեղը տեղ տեղ կէս կանգունի չափ բարձրութեամբ անկուած քարեր կային, որոնք յայտնի նշան մի կրնային սեպուիլ նոյն պատին կիսովի ըլլալուն. այսինքն՝ Ֆայոց և | ատինաց ծախսովին չվնուած ըլլալուն։ Նոյն անկուած քարերը ուրանալը և խորտակելով անյայտ ընելը այնքան դիւրին չըլլալը գիտնալով | ատինք, սկսան 'ի սկզբան ամենայն կերպիւ սիրով և ամենայն խոնարհութեամբ վարուիլ, որ երբէք չէր կարծուեր, թէ այս աստիճան համակրութիւն ցուցընող մարդանութենէ մը այսպէս խորամանկ խարդախութիւն դուրս գայ, որ վասն մեզ և Ձեզ այսպէս վստահացեալ մնայինք. և կը յուսայինք որ գոնէ այս անգամ խաղաղութեամբ գործ մը գլուխ պիտի հանեմք. վասն զի | ատինք կ'ըսէին թէ մենք երեք եղբարք ենք, և գերեզմաններն ալ քանի որ միատեղ են, և միայն սահմանաքարերով որոշուած, իրարանցիւր

ազգ իւր գերեզմանատան պատը իւրեանց սրուշեալ սահմանին համեմատ թող չինէ, լինայ երկայ։ Այսպէս խորամանկ խաբէութեամբ զմեզ և զՅոյնս երբ պաշարեցին, և այն առաջին վստահացուցին որ համարէ թէ իւրաքանչիւր ազգ սեպհական տեղին պատը չինել պիտի սկսէին։ Երբ սեաան որ գործադրութիւնը մօտ է, սկսան գործին բոլորովին ուրիշ կերպարանք մի տալ, և աւելի վստահացընելոյ համար ըսին՝ Շատ լաւ, իւրաքանչիւր ազգ իւր պատը թող չինէ, բայց դռները ինչպէս պիտի ընեմք, և ո՞ր կողմէն պիտի ձգեմք, զի այս որ առը համար ալ մէջերնիս գժտութիւն մի պատահի,—վասն զի իրենց նպատակին համեմատ իրենց գերեզմանատան դրան վրայ կասկած ունին եղեր, ի հարկէ վերոյիշեալ եղանակաւ գործը կատարուելոյ որ ըլլար, հիմակուան ըրած անիրաւութիւնները չպիտի կրնային ընել, և պիտի ստիպուէին իրենց դուռը իրենց կից եղած արքունի ճանապարհին կողմէն ձգել, որ և ոչ մէկուն իրաւանց կը դպչէր։ Այս վասն գարձեալ խօսքերնին փոխելով ըսին.—Աւելի լաւ չըլլար որ երեք գերեզմանատան մէկ պատ քաշեմք, և երկու դուռ ձգեմք, դարձեալ ըստ առաջնոյն անցուդարձ կ'ունենանք իրարու գերեզմանատան մէջէն, առանց պիրար ցաւցընելու։—

"Այլ երբ այս խորհուրդն եւս արդիւնաւորելու վրայ էր, և ըստ այնմ ընելու սկսելու մօտ, դարձեալ խնդիրը փոխելով ըսին, շատ լաւ, բայց այն դռներուն բանալիները ո՞ր ազգին քովը պիտի մնան, եւ ասոր պատճառաւ չըլլայ որ մեր մէջը դարձեալ անհամաձայնութիւնները ծագի և խաւսվութեան վոխուի, (ի հարկէ ունկնդիրք կ'ըսեն այս ինչ զարմանալի խաղաղասիրական հոգի ունեցող կը թւնաւորներ են, երկնային հրեշտակք են ինչ են, որ երբէք խաւսվութեան առիթ անգամ տալէն կը վախչին և կը հեռանան)։

"Արեւմն կարելի չէ արդեօք նոյն դռներուն քով մէկ մէկ սենեակ շինուի երեք ազգաց ծախիւքը, պահապաններ դրուելով բանալիները անոնց յանձնուի, և որ ազգին որ պէտք ըլլայ և երկայ հոն, պատրաստ գտնայ. այս եղանակաւ ահա երեք ազգաց գերեզմանատուններն ալ նախ անատնոց արածելու տեղ ըլլալէ ի զատ՝ հատարակութեան ոտնակոխ ըլլալէն ալ կ'ազատի, և մենք ալ ի զուր տեղ իրարու սիրտ չենք վիրաւորեր։ Այն առաջարկութեան մէջ միայն Հայոց ազգին պիտի ըլլար. վասն զի թէ երկու դրան տեղերը եւ թէ դռնապանաց համար չինուելիք սենեակներուն տեղը Հայոց ազգին գերեզմանատունէն պիտի առնուէր եւ միւս ալ Հայոց ազգին գերեզմանատունն երկու ազգաց ոտից տակ պիտի մնայր յաւիտեան։ Այս վասն ի հարկէ այս խորհուրդը մենք պիտի հերքեինք և հերքեցինք իսկ. և միանգամայն մենք՝ ալ մեր կարծիքը յայտնեցինք, որ և ոչ մէկին սեպհականութեան չդպչելէ ի զատ, շատ ալ պարզ էր և դիւրին, այսինքն՝ Հայոց և Յունաց գերեզմանատանն մէջ տեղին ճանապարհ մը բանալ երեք կանգուն լայնութեամբ. որով ամենայն դիւրութեամբ և խաղաղութեամբ Հայոց և Յունաց գերեզմանատուններն իրարմէ պիտի որոշուէին. նոյն ճանապարհը ըսինք եթէ ուղեմք, բայց կը թողումք. հատարակայ երթեւեկութեան համար. և եթէ ուզեմք, երկու գլուխը երկու դուռ դնեն.

լավ կը փակենք։ Հայոց և Յունաց քով մէկ մէկ բանալի կը գտնուին, երբ պէտք ըլլայ, իրենց բանալիով կը բանան կը գոցեն երկու ազգն ալ. այս երկու եղանակն ալ կարելի է և շատ ալ դիւրին։ Նմանապէս ալ Հայոց և Յունաց եկեղեցիքն մէկ տեղը եղած պատն ալ երկու ազգաց ծախիւք և գիտութեամբ կը շինուի. ինչպէս արդէն նոյն պատին մէջ ամբակուած քարերն ալ կը յայտնէին Թէ նոյն իսկ շինուած ժամանակն ալ այդպէս եղած է. և Հայերս իրենց դուռը իրենց արեւմտեան կողմը կից եղած Թադեաւորական սրբատաշ կողմն կը բանան, այսպէսով երեք ազգաց գերեզմանատունները ամենայն դիւրութեամբ իրենց պատերովը ոչ բաշուած և առանձին առանձին կըզըպանքի տակ մնացած կ'ըլլար, և այսօր ալ այս սրտմաշ դատին պատճառ ըլլալու առիթներ երեւան չէր ելլար։

"Այլ այս մեր օրինաւոր առաջարկութիւնն ինչպէս որ ինքնին յայտնի է խաղաղասէր անձանց, ի հարկէ Հայոց խոհեմները սրտին ծանր պիտի գար և եղաւ այնպէս. վասն զի եթէ գործը այս եղանակաւ պատուէր, անոնց չար և յափշտակիչ խորհուրդը իրենց սրտին մէջ պիտի խզդուէր մնար. և իրենց նպատակին հասնելու համար միջոցը պիտի պակսէր և չպիտի կրնային իրենց ըրած խորհուրդը գլուխ հանել։ Ի նմին երկուց ազգաց, մանաւանդ Հայոց ազգին Երբ այս խաղաղասէր առաջարկութիւն ընդունին, ղրկարդէն Յունաց Սմեն. Ս. Պատրիարքն ամենայն սիրով ընդունած էր, ի խոր խոցեալ խոհեմեցան Հայերն, և փոքր մի յառաջ իրենց այն քաղցր և հեզ խօսուածքը եղբայրսիրութիւնները զըր առատօրէն կը խոստանային մեզ, առ ի պաշարել և խաբել, և ո-

րով զմեզ ղեպղեցուցած իսկ էին քանի մը օր առ ի օրինաւոր պատրաստել իւրեանց մեքենայութիւնները՝ ի դառնութիւն փոխեցին, որով և բոլոր ջանքերն և աշխատութիւնները անօգուտ եղան։

Հայք և Յոյնք միւնդեռ այս սրբատամաշ եղելութեանց վրայ կը խորհէինք և եկք մը գտնելու համար ուրիշ եղանակ կը մտածէինք, մէկ մը ալ լսեցինք որ Հայերն իրենց գերեզմանատան պատը սկսեր են շինել կայծակի արագութեամբ, և երբ հարցուցինք Թէ այդ քանի ընթացք է, որ բռնած էք, ճշ ատաքէն գտնեալ խորհրդակցեինք պիտի, և որ և իցէ կերպիւ համաձայնութեամբ պիտի սկսէինք. այժմ դուք բոլոր ձեր ըսածները մոռնալով անոր հակառակը ի գործ կը դնէք. և եթէ մոքերնիդ բարի է, ինչու այդպէս առանձին, ինչու առանց լուր տալու մեզի, և ինչու այնքան կայծակի արագութեք կը գործէք. միթէ անկարելի բան մի էր անոր միջոցը գտնալ, կամ համազել և կամ համոզուիլ։"

Պատասխան տուին անոնք մեզի ըսելով Թէ, "Այո մենք ալ այնպէս ըլլալը գիտեմք, և կ'ուզէինք ալ, որ և իցէ կերպիւ վերջ մը տալ, այլ երբ նայեցանք որ դուք պատ չինելու միտք չունիք, եթէ ձեզ միայ, շատ պիտի ուշանայ, մեզի ալ մեր Տէրութիւնն ներքին սաստիկ հրամաններ կան որ առանց ժամանակ անցընելու գերեզմանատան պատերը լրացընեմք, վասն որոյ ձեզ լուր տալու հարկ չմնաց։—

"Մենք այս բանիս վրայօք ինչ որ կարելի էր ընել ըսինք Ղզղէթ փաշային օրով. և անձամբ ինքը եկաւ նոյն տեղը, ինչպէս յառաջագոյն ալ պատմուեցաւ, և անոնց երեսին ըսաւ. "Ուրաւունք չունիք Հայոց դե-

բեզմանատան վրայ դուռ ձգելու, քանի որ արեւմտեան կողմը թաղասրահ կայ։ Այս Գուստաս Ադոլֆոսի մարմինը ըլլալով այդ տեղ՝ ըսաւ իրաւանց վրայ ձեր դուռը չեմ ճանաչեր»։ Բայց մի՛ երկար լսողը. Գուստաս Ադոլֆին ըսած խօսքերը բոլորովին ապարդիւն մնային, վասն զի արգելուլ չկարողացաւ. ահա այն է, որ մնաց. քանիցս անգամ Ն. Գուստաւն ձանձրացուցիչ, այլ անօգուտ և չեմք գիտեր թէ ինչ՞ համար մեր գործերը այսպէս երեսի վրայ կը մնան։

«Ահա Պետ. Տեարք, պատմեցի ըստ ձեր Խարձր հրամանի, ըսաւ Ս. Գաբրիէլը. և ահա ականատես եղաք Օսմանեան բարեխնամ Տէրութեան այսքան գարերէ՛ ի վեր հաւատարիմ հպատակին այս Ջրանչիկեան միաբանութեան երեսէն քաշած անտանելի նեղութիւնները, հալածանքները և ըրած կոտորածները ըստ Ջրանչիկեանք յափշտակած են և դեռ այսօր նոր իրաւունքներ յափշտակելու ձեռք կը զարնեն։ Արդեմն Տեարք իմ, կը խնդրեմ իմ կողմէս իմ Աղեքսոր և խնամատար Թագաւորիս հաւատարիմ հպատակ Հայոց ազգին իրաւանց կորստեան կսկիծները Ն. Վեհափառութեան իմացուցէք, և Նորին Հայրական քաղցր ականջները թիւնները և գժութիւնները իբ սիրելի հպատակին իրաւանց վրայ դարձնելու միջնորդեցէք. և եթէ Դուք Պետ, Տեարք, այսքան մանրախոյզ քննութեամբ յայտնի տեսնելէն և իմանալէն յետոյ գարձեալ զանց պիտի ընէք, ինչպես ըրին Ձեր նախորդները, կը խնդրեմ այս օրէն սասցէք ոճմ դիմեմ, զմէ աղաչեմ, զմէ միջնորդ գտնամ, ասացէք ինձ ի՛նչպէս չեմ, զի այս ցաւերը զորս Ջրանչիկ կեանք հետզհետէ հասուցած են մեզ և միշտ կը հասցընեն, ալ անտանելի մեղի և անհամբերելի։ Ասացէք Տեարք իմ, եթէ Խարեխնամ Տէրութիւնը չուզեր մեր աղաչանքները լսել, մեր կորուստները տեսնել, որ երբեք չեմ յուսար, ասացէք մեզի. վասն զի մենք հոս այս մարդկանց ձեռքը գերի և խաղալիք եմք եղած. ալ չպիտի համբերեմ. և ամենայն զօրութեամբ պիտի բողոքեմ և չպիտի դադարիմ ի բողոքելոյ։

«Ի՛նծաղօր Օսմանեան Տէրութեան Վեհափառ Թագաւորին մեծ, քաջ Սուլթան Մահմուտ Խանի փաշային, երբեք չներեր իւր հպատակները բռնութիւնը, որ իւր իշխանութեան տակ գտնուած հպատակաց արդար իրաւունքը կորսուի. ասոր յայտնի ապացոյց կրնայ սեպուիլ ձեր սուրբ Յակովբոյ տաճարին խնդիրը որ այսօր աչքերնուդ դիմացն է, որուն համար ահա յատուկ հրամաններ եւ քննիչ խրկեց ի Պօլսոյ Նորին Վեհափառութիւնն, և զմեզ ի Դամասկոս կոչեց։

«Այո՛, եղած է ժամանակ որ Տէրութեան օրինաւոր չեն կրցած հասկընել և մեր ի մերոյ հակառած բաներուն վրայօք ալ յանկարծ վըճռահատութի՛ չկրնար ըլլալ և ըլլայ ալ օրինաւոր չէ, այլ վասն կ'երկարի երբեմն միջոցը, բայց ոչ երբեք կը մոռցուի, այլ երբ օրինաւոր կերպիւ գործին իսկութիւնը կը յայտնուի և կզտուի, իսկոյն արդար վճռահատութիւնն ալ վրայ կը հասնի. ասոր պէս ալ նայեցէք այս գործերուն մէջ որքան կնճռալի կէտեր կան, որ մենք երբեք չէինք գիտեր, և չէր ալ յուսացուելը, որ այս աստիճան հակառակութիւններ եղած ըլլան, անյուսալի բաներ, անլսելի խարդախութիւններ դուրս եկած լսուելու, է՞ որ դուք

ձնձամբ պատմեցինք, և է որ գործը ինքնին յայտնեց. ՚ի հարկէ այս մեր տեսածները, քննածները և լսածները բոլոր պիտի տեղեկագրեմք Ր. Վրան և պիտի ծանուցանեմք մի ըստ միոջէ, և Ր. Դուռն ալ ըստ այնմ կը տնօրինէ. ուրեմն դուք երբէք կասկած մի ընէք. արդարապէս գրել, և բանին ճիշդ էութիւնը հասկըցընել մեր պարտաւորութիւնն է, ուրեմն դուք մի ամիսս կացէք,» ըսելով վերջացուցին Թէ Պաեմ. Պալի վաշայն և Թէ Պսեմ. Պիւնիճ էֆէնտին իրենց խօսքերը։

Դարձեալ Պսեմ. Պալի վաշայն յաւելցուց ասել Թէ "Ֆաթրիք տօսԹուսմուզ, ձեր լսածներէն շատ բաներ հասկցուեցաւ. և շատ մը մուԹ ձնացած պարագաներ լուսաւորուեցան, բայց ինձ այնպէս կը Թուի, որ նոյն գործերը այդպէս անիրաւաբար ձգուելուն գլխաւոր պատճառ մը պիտի ըլլայ, վասն զի ինչպէս որ Թէ իրենց քաշած յաւակագիծը (խարդախ) Թէ ձեր քաշածը յայտնի կը ցուցընեն որ Պատրիարքական արհեստեան կողմն օրինաւոր ձամբայ կայ և իրենց աւելի դիւրին է անկէց գործ բանալ, այդ մարդիկները այդքան իրաւունք չճանչցընելին չեն, ՚ինչպէս կ'երեւի, բայց ՚ինչպէս կարելի է որ իրենք ըստ իրենց քմայ այլոց իրաւանց վրայ գործ ձգեն, բոլոր աշխարհի և Տէրութեանց հակառակ է այդ և կատարեալ բռնութիւն. ուրեմն ես Թէ այս բանիս յատուկ պատճառ մի կայ Թէ ձեր և Պատրիարքական կողմանէ, այն ալ եԹէ իմացընէք, աւելի լաւ կ'ըլլայ, գործն ալ աւելի դիւրութիւն կ'ընծայէ. ըսէք ուրեմն։

"Գիտի որ Ձեր Պսեմութիւնը կը խոստանայ և կը կամի համոզել գործն իսկ արմատն այն որոտմանէ գործոյն, ուրեմն պարտաւոր եմ Ձեր Պնճութեանը պատմել նոյն իսկ արմատական պատճառը, ըսաւ Պ. Պատրիարքը և սկսաւ այսպէս պատմել միստմիոջէ։

"Այս գերեզմանատան դռներուն խնդիրը ուրիշ խնդիրէ ծագած է որ շատ հետաքրքրական է, և նոյն դռներուն ձգուելուն մէջ եղած գաղտնի նպատակը յայտնել չեն ուզեր Պատրիարք. վասն զի իրենց ըրած յայտնի անիրաւութիւնը վկայած կ'ըլլան, բայց ես կը յայտնեմ Պսեմփայլ Տերք։ Ինչպէս յատակագծին մէջ կ'երեւի, Պ. Միսօ լերան վրայ Պատրիարքական կից պարտէզի ունիմք մեզ Հայոց սեփհական. Պատրիարք իրենց միտքը դրած են ՚ի վաղուց նոյն պարտէզին բաւական մեծութեամբ մաս մը, այսինքն՝ 750 կանգուն գետին իրենց կողմը կորզել որ և իսկ եղանակաւ, ինչպէս ըրած են իրենց գերեզմանատան մեկ՚մասը զոր վերը յիշեցինք, որով իրենց գերեզմանատունն աւելի ընդարձակել. և այս խնդիրը ժամանակ ժամանակ մեզ առաջարկելին Թէ և զանազան եղանակաւ, այսինքն երբեմն իբր շնորհք և ՚ի սէր եղբայրութեան խնդրելով, երբեմն ուրիշ տեղի հետ փոխել ուզելով. երբեմն սպառնալիքներով ահ և սարսափ ձգելով իրենց պաշտպան եղող Տէրութեանց անունով. երբեմն միշտ հաշտ ակամբ նայելու պայմանաւ, և երբեմն մեծ մեծ խոստմունքներ ընելով. լաւ ևս է ասել՝ խաբել կամելով զմեզ իբրև տհաս մանուկ, ինչպէս Կեսարիոյ մէջ այն Հրէայն, որ իւր խորամանկ խաբեբայ բնութեամբն յափշտակել կը ջանայր զերդուն ձեռքէն պատուական ոսկին։ Ընդհանք կը կարծեն Թէ Հայոց միաբանութիւնը Միսօ լերան վրայ ունեցած իւր սեփհական տեղին յարդը, և պա-

սիւը չգիտէր։ Ա՛յլ երբ տեսան որ անոր յարդը իրենց կարծածէն աւելի լաւ պիտի, և դիտնալով | տանէց այդպէս խարդախ խնդիրները մերժէր էր և պիտի մերժէ յաւիտեան, քանի որ չեն ճշմարիտ, չեն արդար և չեն անխարդախ։ Երբ այս եղանակները լով Հայոց միաբանութիւը չկարողացան խաբել, եկան այս գերեզմանատան պատերը շինելու խնդիրը հնարեցին. այսինքն՝ յանիրաւ տեղը Հայոց գերեզմանատան վրայ երկու դուռը մըկէն ձգել. և մենք որքան խորհեցանք և խօսեցանք, բողոքեցինք, իրաւունք պահանջեցինք, և այլն. ամենն ալ ի դերեւ ելաւ, քանզի մտիկ ընող չըկար, քանզի Տէրութեան պաշտօնեաներն անդամ բարեխնամ Թադաւորիս հրամանները կատարելու դժուարութիւններ կը հանէին. ի հարկէ այն անվայել էնթրիքներուն երկիւղէն խեղճ Հայոց ազգին արդար սեպհականութեան իրաւունքը ոտքի տակ պիտի երթար. պիտի քանաքարուէր բոլորը, լալը, ողբալը, աղաչանքը, պաղատանքը անլսելի պիտի ըլլար, ինչպէս որ եղաւ։ | տանիք յաղթութեան դռները հատատեցին իբրեւ փարիզի յաղթութեան կամարը, փարիզի չնորհիւ, սկսան յաղթութեան դռներէն մտնել ելլել ի նախատինս Հայոց միաբանութեան, կարծելին որ եղաւ կատարեցաւ. բայց ըլկեալ Հայոց միաբանութիւնն կ'աղաղակէր և ասէր. ըլկեալ եմ յարդար և սեպհական իրաւանցս չնորհիւ. . . . . կ'աղաղակեմ առ | տինս և չկամեր լսել և իմ իրաւունքս ետ դարձնել, կ'աղաղակեմ առ Բաղաքապետեան, նա եւս ոչ կարէ ղիմ իրաւունս կորզել բռնաւորին ձեռքէն. կ'աղաղակեմ առ Ր. Դուռն, և նա ոչ դիտեմ ինչո՞ւ իմ խնդիրներուս կարեւորութիւն չտար և չպատասխաներ. թէ և այս աղաչանաց ձայնը չէր լսուեր, բայց ղկիոզին ականջին սուր ապդեցութիւն կ'ընէր. իրեն խիղճը նեղսէն ղինքը կրտագնապէր։ Այս խըղճահարութիւնէն ալ աղատելու համար և Հայոց միաբանութեան բերանը գոցելու համար որ չաղաղակէ, միջոց մը գտնելը չուշացուցին Ջրանչևակեանք, և յաջողեցան ալ և գտան իրենց կամակատար Կաթոլիկ Գոնսօլոզին մէկը, որ նախ իւր կողմանէ և յետոյ նոյն միաբանութեան կողմանէ շատ Թախանձանօք կը խնդրէր նոյն վերոյիշեալ պարտիզին կատըն և կ'ըսէր, թէ "Եթէ կը հաճիք տալ նոյն կտորն, ես Ջրանչևակեանները կրնամ համոզել որ նոյն ձեր լրաւանց վրայ բացուած երկու դռներն ալ բոլորովին ձեր ուղածին պէս անյայտ կերպիւ գոցուին։ Երբ այս խնդրոյն բացատական պատասխան տուեցաւ, ուրիշ անգամ մի դարձեալ գալով ըսաւ. "Եթէ կամիք նոյն կտորն տալ, դռները գոցուելէն ղատ՝ նոյն պարտիզի կտորի արժողութիւնն կամ անոր փոխարէն գեղին մը կուտանք։"—Ըսի, "Պ. Հիւպատոս, նոյն տեղին համար դրամ չեմ ընդունիր. այլ տեղի հետ կրնամ փոխել երբ ուզած տեղս ըլլայ, այնպէս որ գոնէ կոչնցուցած տեղիս չափ արժողութիւն ունենայ։—Ըսաւ՝ շատ լաւ, ըսէ, ի՛ր տեղ կուզես։—Ըսի Գեթսեմանի ձորին մէջ Ս. Աստուածածնայ գերեզմանին մօտ | տինաց պարտէզը, ուր կան ուղիղ հատ հնագոյն ձիթենւոց ծառք ղՆախ ֆառ* կոչուած, Բրիստոսի աղօթատեղւոյն մօտ։ Երբ այս լսեց Պ. Հիւպատոսը, ժպտեցաւ և ըսաւ. "Այն թէ կարելի բան է այդ. և ինչպէս կրնայ լինիլ։"

"Ուրեմն ասացի ես ալ, ի՞նչպէս կրնայ լինիլ Ս. Միսն լերան վրայ 750 կանգուն գետին ոչ ինչ տեղի մը հետ փոխել. Ձեր մեծութիւնը միթէ չըգիտեր, որ մեր տեղը ոչ թէ միայն մեզ համար, այլ ամենայն ազգ գայ համար եւս Ս. Միսն լեռան ալ նուիրով պանծալի եւ ծանելի անուն մի է (մուգատաէս), ձեր տալիք տեղին աւելի յարգի եւ աւելի մեծ, ուրեմն մտքերնիդ ինչ է. մէ ապաքէն դուք ըսիք թէ ուզեցէք | ատինայ ձեռքը գտնուած տեղերէն ուր տեղ որ կ'ուզէք, և ես ըստ այնմ ասացի. ահա, եթէ չէք կամիր, շատ լաւ. մեր դէմինը մեզ պէտք է։" Այս բանին վրայ շատ մը խօսակցութենէ ետքը վերջապէս այն օրն ալ գնաց։—

Յարձեալ ուրիշ օր մի ալ գալով նոյն հիւպատոսն, կ'աղաչէր և կ'ըսէր. "Ուզղակի ինձ համար կը խնդրեմ ինձ պատկելու տեղ ընելու համար ինձ շնորհք ըրէք, ես իմ գերեզմանս պիտի չինեմ նոյն տեղը իմ անձիս համար, և այլն։—

Ասացի, Պ. Հիւպատոս, դուք ինչո՞ւ համար այսպէս չար և ցամաք տեղեր պիտի պատկիք. դնացէք ձեր այն ղուարձալի, զով, խոտով և ծառով և ծաղիկ լի Շրօսպան հան պատկեցէք. քանի որ այնպէս հայրենիք ունիք կարեւորութիւն չկայ ձեզ գալ ինձ նոյն կտորին համար այնքան ազատ չելու և ինձ չսեղուլ։—Նոյն օրը կ'երեսար որ իւր լեզուին տակը բան մը կար, կ'ուզէր դուրս հանել, բայց հանելու դժուարութիւն կը կրէր, խօսքը շատ մը ատկին անդին պտըտցընելէ ետքը ձեռքս բռնելով վերջապէս համարձակեցաւ ըսել գայ խօսքերը արտահանել բերնէն, այսինքն՝ թէ կ'աղաչեմ դուք այս կլոտրը | ատինայ շնորհեցէք, և ես նոյն շնորհքին տակը չեմ մնար, և զձեզ գոհ ընելու չափ կ'աշխատիմ, և այլն։—

Օխ, Պ. Հիւպատոս, այդպէս անշան խօսքերէ և մանր խնդիրներէ բան չեմ հասկընար. կը խնդրեմ ձեր խօսքերը բացայայտ խօսիք՝ թէ ինչ ըսել է եթէ նոյն գետինը ձեզ տրըուի, զիս գոհ ընելու չափ Ձեր աչխատիլը։—

"Այս ըսել կ'ուզեմ ըսաւ, դուք շնորհեցէք նոյն գետինը | ատինայ, և ես խօսք կ'ուտամ ուղղակի ծանուցանել Կայսեր Ձեր ըրած առատաձեռնութիւնը. և նոյն տեղին յարգը եւս կը ծանուցանեմ Տէրութեան, և ի հարկէ անոր փոխարէն . . . . . ձեզ համար Կայսրը օրինաւոր բան մը կը ղրկէ," և այլն։

"Հիմա իմացայ Ձեր աշխատութիւնն, մեծապէս շնորհակալ եմ Պ. Հիւպատոս ըսի, այդ աշխատութիւնը ինձ համար մի կրեք. այդ Թող մնայ. կեցէք Ձեզ ըսելիք ունիմ։ Այդ խօսքը ձեր բերնէն հանելու համար կը րած նեղութիւննիդ ինձ համար բաւական է. դուք Պ. Հիւպատոս, այդ խօսքը ձեր բերնէն հանելու չէիք այդ խօսքը ձեզմէ լսած, դուցէ կարելի էր, թէ և չէր, այլ քանի որ այդ խօսքը ձեր բերնէն ելաւ, ահա այժմ ամենաանկարելի եղաւ այդ գետինը | ատինաց որ և իցէ կերպիւ տալը. վասն զի ձեր այդ խօսքը Պ. Հիւպատոս, ինձ համար անտանելի է. դուք ինչ կարծեցէք Հայոց Պատրիարքը, այսպէս անտաք բաներու խառնուելով իւր Ազգին սեպհականութիւնն (որու վրայ իր անձը դրած է) օտարաց կը շնորհէ կարծեցէք ի՞նախանձնա իւր անուանը ազգաց յազգս։ Վաւ լսկի, Հայոց Պատրիարքը այդ ստորութիւնն չը կրնար ընդունիլ. այդպէս անտաք բաներով չկրնար փոխանակել իւր սիրե-

լի Ազգին օրինաւոր և նուիրական և բաւունքը, ասա ինձ, քո կարծիդ ինձ զրկելիք պատուհասին արժանը Թիւնն քանի՞ հարիւր ոսկիի արժողութիւն կրնայ ունենալ. Թող ըլլայ հինգ հարիւր լիրայի, առաւել եւս հազար լիրայի, ոսկեայ աւելի կարելի՞ է։ Ից, ըսաւ Պ. Ֆիւպատոն, և ոչ երեք հարիւր լիրայի, գուցէ ըլլայ երկու հարիւր կամ երկու հարիւր յիսուն լիրայի, բայց և այնպէս գիտէք որ արժողութեան վրայ չէ Թագաւորայ տուած պարգեւը, միայն անունը բաւական է, և դինն անգին. և ձեզ համար մեծ պատիւ կը սեպուի։—

«Ինձ համար մեծ պատիւ և անգին գանձ և բարեբաստիկութիւն՝ իմ սիրելի Ազգիս իմ ունեցած պարտաւորութիւնս ճանչնալը է. իմ Ազգային սեպհականութեանց և իրաւանցս վրայ օրինաւորապէս և հաւատարմաբար, ըստ իմ պարտաւորութեանս հակիրճ է, և նոյն պարտաւորութիւնս կատարելիս կը ծագի այնպիսի մեծ պատիւ մը, որ ոսկեայ աւելի մեծ և անգին գանձ և պատիւ ինձ համար չկրնար գտնուիլ՝ ի ներքոյ արեգական։ Իմ դուք Պ. Ֆիւպատոս կը ըսեմանամ թէ ինչպէս համարձակեցաք առանց արկել այնպէս վատ և ամենավատ նենգիր մը. և յանմիջ սոսկալեցաք, և մի յորպսիոց զձեզ այդպէս ցուցաք, անկը առաջարկութիւն մը ընել դէմ մարդուն մարդուն բնաւորութեան վրայ առանց տեղեկութիւն ունենալու։ Կիցուք թէ Ձեր Թագաւորին ինձ զրկելիք պատուհասին իմ քիչ մը յառաջ ըսածիս չափ մեծ արժողութիւն ունենայ, և ձեր ըսածին չափ ալ մեծ պատիւ բերած ըլլայ իր հետը. ես ինչի՞ն պիտի սոսկայի այն արժողութեան և այն պատուոյն համար իմ սիրելի Ազգս և իմ բարեբաստիկ Տէրութիւնս ի պատիւ իմ Ազգիս պահած Թողութիւնը է, և զրկիր է ինձ այն պատիւներէն, որ ապագային կարծիքիս վրայ լեցուած է արդէն, եթէ երբեք չունենամ այնքան համար այդ անարդ անունն վրան առնեմ իմ ազգային սեպհականութիւնս իմ սիրելի Ազգիս արեամբը գնուած գեաներն այլոց չնորհելով երբեւ անհատատարիմ և երբեւ մատնիչ. քանի գիտցէք Պ. Ֆիւպատոս, մարդ աշխարհիս վրայ միայն անուան համար կ'ապրի. և այն՝ բարի անուան, վասն զի ըստ գրոյն՝ «Լաւ է անուն բարի, քան զգանձս բազումս։»

«Ձեր այս խօսակցութիւններէն յառաջացած սրտիս կսկիծը չկրնալով զսպել գլխիս վերարէն գնուասեղ մը (Թօփլու) քաշելով ըսի իրեն, նայեցէք Պ. Ֆիւպատոս, այս գնուասեղին հատը մէկ փարայ կամ երկու հատը երեք փարայ կը ծախուի, բայց երբ իմ Ազգս կամ իմ Թագաւորս իմ պաշտօնիս մէջ հաւատարիմ գտնուելուս համար մէկ հատիկ այսպէս գնուասեղ մը զրկեն ինձ՝ գլխուս վերարին գործածելու համար, ձեր Մեծութիւն ձեռաք ձեր Թագաւորին գալիք հազար լիրայի արժողութեամբ պատուանշանին և իւր հետը բերելիք պատիւն աւելի մեծ պատիւ կը համարիմ ինձ. իմացաք հիմա Պ. Ֆիւպատոս Ֆայոյ Պատրիարքին տարբերութիւնն։ Ահա երբեմն այսպէս օգտակար կարծուած առաջարկութիւններ որ առաջարկողին աչքին մեծ կ'երեւայ, այլ երբ առաջարկողը առանց որոշելու ընդունողին բնաւորութիւնն առաջարկէ, այսպէս այն պատուական չնորհքը իւր յարգը կը կորսնցնէ։ Ես չեմ կրնար իմ Ազգիս և Տէրութեանս դէմ անհատատարիմ գտնուիլ անոսի և անլի Ազգին օրինաւոր և նուիրական և բաւունքը, ասա ինձ, քո կարծիդ ինձ զրկելիք պատուհասին արժողութիւնն քանի՞ հարիւր ոսկիի արժողութիւն կրնայ ունենալ. Թող ըլլայ հինգ հարիւր լիրայի, առաւել եւս հազար լիրայի, ոսկեայ աւելի կարելի՞ է։ Ից, ըսաւ Պ. Ֆիւպատոն, և ոչ երեք հարիւր լիրայի, գուցէ ըլլայ երկու հարիւր կամ երկու հարիւր յիսուն լիրայի, բայց և այնպէս գիտէք որ արժողութեան վրայ չէ Թագաւորայ տուած պարգեւը, միայն անունը բաւական է, և դինն անգին. և ձեզ համար մեծ պատիւ կը սեպուի։—

«Ինձ համար մեծ պատիւ և անգին գանձ և բարեբաստիկութիւն՝ իմ սիրելի Ազգիս իմ ունեցած պարտաւորութեանց Թիւնն ճանչնալը է. իմ Ազգային սեպհականութեանց և իրաւանցս վրայ օրինաւորապէս և հաւատարմաբար, ըստ իմ պարտաւորութեանս հակիրճ է, և նոյն պարտաւորութիւնս կատարելիս կը ծագի այնպիսի մեծ պատիւ մը, որ ոսկեայ աւելի մեծ և անգին գանձ և պատիւ ինձ համար չկրնար գտնուիլ՝ ի ներքոյ արեգական։ Իմ դուք Պ. Ֆիւպատոս կը ըսեմանամ թէ ինչպէս համարձակեցաք առանց արկել այնպէս վատ և ամենավատ նենգիր մը. և յանմիջ սոսկալեցաք, և մի յորպսիոց զձեզ այդպէս ցուցաք, անկը առաջարկութիւն մը ընել դէմ մարդուն մարդուն բնաւորութեան վրայ առանց տեղեկութիւն ունենալու։ Կիցուք թէ Ձեր Թագաւորին ինձ զրկելիք պատուհասին իմ քիչ մը յառաջ ըսածիս չափ մեծ արժողութիւն ունենայ, և ձեր ըսածին չափ ալ մեծ պատիւ բերած ըլլայ իր հետը. ես ինչի՞ն պիտի սոսկայի այն արժողութեան և այն պատուոյն համար իմ սիրելի Ազգս և իմ բարեբաստիկ Տէրութիւնս ի պատիւ իմ Ազգիս պահած Թողութիւնը է, և զրկիր է ինձ այն պատիւներէն, որ ապագային կարծիքիս վրայ լեցուած է արդէն, եթէ երբեք չունենամ այնքան համար այդ անարդ անունն վրան առնեմ իմ ազգային սեպհականութիւնս իմ սիրելի Ազգիս արեամբը գնուած գեաներն այլոց չնորհելով երբեւ անհատատարիմ և երբեւ մատնիչ. քանի գիտցէք Պ. Ֆիւպատոս, մարդ աշխարհիս վրայ միայն անուան համար կ'ապրի. և այն՝ բարի անուան, վասն զի ըստ գրոյն՝ «Լաւ է անուն բարի, քան զգանձս բազումս։»

«Ձեր այս խօսակցութիւններէն յառաջացած սրտիս կսկիծը չկրնալով զսպել գլխիս վերարէն գնուասեղ մը (Թօփլու) քաշելով ըսի իրեն, նայեցէք Պ. Ֆիւպատոս, այս գնուասեղին հատը մէկ փարայ կամ երկու հատը երեք փարայ կը ծախուի, բայց երբ իմ Ազգս կամ իմ Թագաւորս իմ պաշտօնիս մէջ հաւատարիմ գտնուելուս համար մէկ հատիկ այսպէս գնուասեղ մը զրկեն ինձ՝ գլխուս վերարին գործածելու համար, ձեր Մեծութիւն ձեռաք ձեր Թագաւորին գալիք հազար լիրայի արժողութեամբ պատուանշանին և իւր հետը բերելիք պատիւն աւելի մեծ պատիւ կը համարիմ ինձ. իմացաք հիմա Պ. Ֆիւպատոս Ֆայոյ Պատրիարքին տարբերութիւնն։ Ահա երբեմն այսպէս օգտակար կարծուած առաջարկութիւններ որ առաջարկողին աչքին մեծ կ'երեւայ, այլ երբ առաջարկողը առանց որոշելու ընդունողին բնաւորութեան առաջարկէ, այսպէս այն պատուական չնորհքը իւր յարգը կը կորսնցնէ։ Ես չեմ կրնար իմ Ազգիս և Տէրութեանս դէմ անհատատարիմ գտնուիլ անոսի և անլի

յաւոր պատուանշանի մը համար. կը խնդրեմ Պ. Հիւպատոս ոչ այս առաջարկութիւնն և ոչ նոյն գեանին խըն դիրը կրկնեք ինձ ուրիշ անգամ, եթէ կ'ուզէք մեր բարեկամութեան կապը չխզել. և կը խնդրեմ ներողամիտ եղիք իմ պարտաւորութենէս ստիպեալ ըսած խօսքերուս ծանրութեանը, զոր համարէ թէ յակամայից ստիպուելոյ արտասանելուս, զոր դուք ալ գիտէք:

"Պ. Հիւպատոսին այս բանին վերայօք խօսածները իմ անձիս գովութեան վերաբերելուն համար զանոյ կ'ընեմ Ձեր Վեհութեան պատմելու. այսքանը իմացէք որ բոլոր ընծաներուս իրաւունք տալէն ետքը, ամենայն սիրով բաժնուելոյս մեզմէ:

"Ընդ Վեհ. Տեարք, կատարելապէս իմացաք Միհնի գերեզմանատան խնդրոյն ծագման բուն աղբիւրը, և տեսաք որ Օսմանեան բարեխնամ կայսեր հաւատարիմ հպատակ Հայոց ազգը ոչ աստիճան նեղութեանց եւ տառապանաց տակ ընկճեալ իբրեւ գերի կեանք կը վարէ, այսպէս օտար ժողովրդոց և օտար տգիտութեան ձեռքէն, որք որ և իցէ կերպիւ բոլոր ճիգերնին կը թափեն մեր և մեզապիսի Տէրութեան հարազատ հպատակաց ձեռքը գըտնուած սեպհական ստացուածքները յափշտակելու և իւրացընելու համար, մինչեւ անգամ Հիւպատոսաց և Դեսպանաց ձեռօք ինչ գաղտնի գործերը կը գառնայ, զորս միայն Ընտուած գիտէ:

"Ընդ ինձ ինչպէս որ պատահեցաւ Ձեր Վեհութեան առջեւ մի ըսած միջի պատմեցի. և դուք լսեցիք Տեարք իմ, այս գործիս մէջ գործած մեքենայութիւնները, դուք ինքնին դատեցիք եւ մեր իրաւունքը մեզ դարձուցիք. Շէֆքեաթը Լֆէնտիմիզ Փաթիշահըմըզըն աղիզ պաշը ի չիւն օլսուն, վէ սելամ:"

Ու այսպէս վերջացաւ Սուրբ Տեղեաց խնդիրը եւ տեղեկագրեցաւ եւս Ի. Դուռն. դեռ կ'ըսպասեմք նոյն խնդրոյ համար ելլելիք արդար վճիռներուն որ մենք ալ մեր կորուսած սեպհական իրաւանցս Տէր ըլլամք. 'ի հարկէ այն ալ մօտ է Այեւի շահանէտ:

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ
Ա. ՈՂՋՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն, տես Թիւ 6:)

Կրթութիւն, որք միշտ ընթեռնուն և գըրեն, բաղում անգամ վշտանան աչացուկութեամբ կամ նուազուկութեամբ աչաց. մանաւանդ որք ընթեռնուն կամ գրեն յերեկոյեան կամ 'ի գիշերի 'ի լոյս ճրագի, որ գրեթէ վնասակար է աչաց յոյժ, յորմէ զգուշանալ պարտ է, որչափ և հնար է: Նայց եթէ որ ոչ կարէ թողուլ զայս սովորութիւն, բարւոք է նմա հովանաւորել զաչսն 'ի բոցոյ ճրագին 'ի ժամու ընթերցման կամ գրելոյ: Ու նուազ աչաց յոյժ օգտէ ցուրտ ջուրն յանուշն երկիցս կամ երիցս լուանալ զայն, ընդ որ և եթէ խառնես ցի սպիտակ օղի իբրեւ զքսան չիլի 'ի մի բաժակ ջուր, օգտէ յոյժ:

Ձիք ինչ վատթարագոյն աչաց քան որ պատճառի յապականեալ հիւթոյ, որ է արդիւնք խորախորհուրդ մտաց ծողու Թեան, և. վշտալի քան զամե

նայն ցաւս է ախտ ախոնդանաց, այս
լինքն՝ ապականութիւն աղեաց, որ գը
բեթէ հասարակ է ՚ի մէջ ուսումնասի
րաց, յորմէ յառաջ գայ նուազութի՛
անդամոց, պակասութիւն ախորժա
կի, անհամութիւն ճաշակի, մշտական
թաղձութիւն մռայ, անդադար եր
կիւղ մահու և պէսպէս այլանդակ
և զարհուրելի խորհուրդք, զորս բը
ժկել անհնարին է։

Ուսումնասէր անձինք առ ՚ի դիւ
րութիւն տալ մտացն ոչ միայն պար
տին ընդհատել զընթերցուլն և ըն
դրելն, այլ և հարկէ նոցա տալ զանձինս
և յայլ աշխատասիրութիւնս առ ՚ի
զբաղել զմիտան ցայն աստիճան, որով
խափան մտաւոյն մռածողութիւնք
խորաքննին գործոյ։

Ուսումնասէր անձինք բազում
անգամ ամօթ համարին ընկերել ընդ
այնոսիկ, որք չէն համբաւեալ գրա
ւորական գիտութեամբ, բայց այս է
գլխովին անմտութիւն. քանզի չէ բը
նաւ ամօթ, յորժամ մտանէ զբ ՚ի մի
աբանութիւն լինչ առ ՚ի դիւրել մի
այն զլսեալ միտս իւր ուրախ և զը
ւարձ ընկերակցութեամբ, թողդի և
ընկերակցութիւն երեխայոց երբեմն
բառնայ զթաղձութիւն մտաց, յորմէ
չէ պարտ խորշիլ բնաւ։

Հարկաւոր է յոյժ և կարի օգտա
կար ուսումնասէր անձանց, յորժամ
վիճակ իւրեանց ձեռնտու է նոցա
ընտրել արտաքոյ տան ընդարձակ, օ
դաւոր և զուարճարար տեղի, որ ոչ
միայն արդելու զվատթար ներգործու
ծութիւն վակեալ օդոյ տան, այլ և
զուարթացուցանէ զղջրութիւն մար
մնոյ և զկարողութիւն մտաց։

Ո՛ր և իցէ, որ միշտ ընթեռնու
կամ գրէ, պարտ է կարի մտադիր լի
նիլ դրութեան նստելոյ, պահելով
զինքն միշտ ուղղորդ. զի որպէս ա
սացաւ՝ կորացեալ դրութիւնն մեծ
վնաս պատճառէ աղեաց և թոքին՝
ձնշելով զայնս։

Ո՛ձմեռով և բարձր ձայնիւ ըն
թեռնուլն բազում օգուտս ընծայէ
ուսումնասէր աշակերտաց, զի. ոչ մի
այն կրթէ զթոքն, այլ և զջղոյր մար
մինն, և զարթուցանէ զմիբեռնողա
կան զօրութիւն մտացն։

Ինաիր և վայելուչ ժամանակ ուս
ման է առաւօտն, բայց և այս ժամա
նակ է յոյժ պատշաճ եղանակ կրթու
թեան, յորում ստամքն դատարկ է
և զօրութիւն մարմնոյն նորոգեալ՚ի քը
նոյ. վասն որոյ եթէ ուսումնասէր ան
ձինք ծախեսցեն զմտան լինչ առաւօ
տու արտաքոյ տան կրթութեամբ,
մեծ օգուտս ընծայեսցեն առողջու
թեան անձին և զօրութեան մտաց։

Արուեստականութիւնն է բարե
յաջող միջոց՚ի դիւրել զվհատեալ
միտս, և ոչ սակաւ օգտէ ուսումնա
սիրաց, եթէ իւրաքանչիւր ոք՚ի նո
ցանէ ուսանիցի զոյս դիւրարար ա
րուեստս, և՚ի խնդիր մտացն՚ի խորա
քննին՝ մռածողութենէ և առ՚ի խաղա
ղել զայն և՚ի նորոգել զառաջինն զօրու
թիւնն, զզաղեսցէ զինքն՚ի ժամ ինչ՚ի
քնար և յերգս։ Ուսումնասէրք կամ
ծանր աշխատասէրք՚ի լքանիլ զօրու
թեան մարմնոյ և մտացն սովոր են առ
՚ի զարթուցանել զայն կրկին, առնուլ
զօրաւոր ըմպելի ինչ. բայց այս դեղք
անօգուտ և փորձիւ վնասակար յոյժ։

Վնաս է այնպէս օգտաւէտ և դեղ
զօրաւոր լքեալ մտաց, որպէս հեծա
նել՚ի ձի և վարել զնա՚ի տան կամ
յերկաթատան մղոնս, յորմէ՚ի դառ
նալն սակաւիկ մի հանդչել. և ապա
մտաչել կրկին՚ի գործ։ Որպէս և ես
առնեմ միշտ, զի յորժամ ծանր պա
տասխանի ուսման կամ գործոյ ինչ
լքուցանեմ զնս իսպառ, առ ժամայն

հեծանէի յերիվար իմ և վարէի ընդ նա ՚ի տան կամ յերկոտասան մղոնս յապարակի ուրումն բարեկամի, և մնայի անդ մի կամ երկու աւուրս, պարապելով ՚ի պէսպէս զուարճալի խաղս և ՚ի ղբօսալի տեսարանս, և ապա գառնայի ՚ի տուն ՚ի գործ իմ ընդ աստղի մնոք, ուրախ սրտիւ և նորոգ գեալ զօրութեամբ մարմնոյ։

Աւտումնասէրքդ կարեն վայելել զամենայն տեսակս կերակրոց, բայց պարտին զգուշանալ նախ՝ զի մի լցէ այն վնասակար. երկրորդ՝ զի մի ուտիցեն անժամանակ կամ անդրքան զչափ յագեցման. և երրորդ՝ զի մի լցէ այն անքարեխառն, քամոտ, նեխեալ ջերմաքնդի կամ դժուարամարս։

Ընթրիք նոցա պարտ է լինիլ միշտ թեթեւ, դիւրամարս և նախ քան զերեկոյանալն։

Գիւտաւորագոյն ըմպելիք նոցա պարտ է լինիլ ցուրտ ջուր. կարեն և երբեմն առնուլ տակաւ ինչ լաւ գաթեջուր կամ օշարակ ՚ի հիւթոց խնձորի, ՚ի չաքարէ, ՚ի հիւթոց լիմնի, նարնջի, տանձոյ, ծաղկանց և ՚ի քացախ։ Նաև երբեմն գինի և ցբի խառնեալ չափաւոր ցուրտ ջրով։

Կրթուելիւն նոցա լցէ միշտ ՚ի բաց օդի. և որպէս ասացաւ՝ առաւել օգտաւէտ և առողջարար կրթուելիւնք են ճեմելն, հեծանելն ՚ի ձի, մշակելն ՚ի պարտիզի և խաղալ գործս ունեալ և ղբօսալի անձնամարզուելեամբ, այսինքն՝ պարել, ոստնուլ, վազել, լողալ, և այլն. բայց հայիլ պարտ է, զի մի կրթուելիւնն լցէ անդրքան քան զչափ կարողութեան մարմնոյ, որոյ վնասն մեծ լնոյր քան զգուտն. և ամենայն կրթուելիւն պարտ է լինիլ յառաւօտս, յորում առամնքան դատարկ է և զօրութիւն մարմնոյն նորոգեալ ՚ի քնոյ։

Նա և ոչ տակաւ օգտէ առողջութեան՝ յուրտ ջրով լուանալն յամենայն առաւօտս հեղլով ՚ի վերայ գլխոյ, որ կազդուրէ և սնդէ զքիմքն, և նորոգէ զզօրութիւն մարմնոյն, յատկապէս ՚ի ջերմ եղանակի և ՚ի ջերմ կլիմայի, որ կարէ փոխանակիլ կրթութեան, զոր չէ պարտ քնաւ զանց առնել։

Կենցաղ կարգադրութիւնք չիշատակեալ ՚ի սոյն գլխոջ պատկանին առ հասարակ և հաշուեկալաց, գրագրաց, սեղանաւորաց և այլոց, որք յառաւօտէ սկսեալ մինչեւ ցերեկոյ ընդմէն ՚ի գործ իւրեանց առանց լրիք կրթութեան, յորոց և բաղմաց կեանք վտանգին պէսպէս անքաւելի հիւանդութեամբք։

ԳԼՈՒԽ Դ.

Անուղղ կենաց։

Անհատակար կերակուր և անկանոն կիրառութիւն կերակրոց պատճառ է զպէսպէս վտանգաւոր հիւանդութեանս։ Քանզի չիք տարակոյս, զի կերակրով միոյն փոփոխին ամենայն խառնուածք մարմնոյ, որով հնար է հեղուկացն երբանալ կամ թանձրանալ, մեղմանալ կամ բարկ կրթիլ, կծուիլ կամ թթուիլ, մածնուլ կամ լուծանիլ յատուկ ձեւս վնասակար։

Չէ նուազ և ներգործութիւն կերակրոց ՚ի վերայ թանձրացն մասանց մարմնոյ, այսինքն՝ ՚ի վերայ մկանանց և ջղից, զորս պնդէ կամ թուլացուցանէ, և զնոցին զգացողութիւնն յաւելու կամ նուազեցուցանէ։

Դոյզն ինչ մտադրութիւն առ այս

բաւական է՝ ի յուցանել թէ զնաթրդ և պրչամի պահպանութիւն առողջութեան մարդոյ կախի՝ ի պատշաճ ըղդուշութենէ կարգադրեալ կերակրոց։ Ո՛չ մոգրութիւն պատշաճ և ղդուշաւոր կարգադրութեան կերակրոց ոչ միայն հարկաւոր է վասն առողջութեան, այլ և է զօրաւոր միջոց բժշկութեան ամենայն ցաւոց. զի իւրաքանչիւր բժշկի գլխաւոր ուշադրութիւն հիւանդութենէ իմիք պահանջէ ժուժկալութիւն կերակրոց, ի բաւի է, զի ներդործութիւն սորա չէ այնպէս փութանակի որպէս դեղոցն, սակայն առաւել տեւողական է այս և կազդուրիչ. և ոչ այնպէս անհաճոյ և տաղտկալի հիւանդին կամ վասն գաւոր, որպէս դեղն։

Դիտաւմն մեր ոչ է ճշդիւ քննել զնութիւն կամ զյատկութիւն զանազան կերակրոց, զորս մարդիկ՝ ի կիր առնուն, և ոչ եւս՝ ի յուցանել զնոցին ներգործութիւն՝ ի վերայ զանազան կազմուածոյ մարդկային մարմնոյ. այլ միայն է՝ ի նշանակել զինքսակարօրհնաւորինչ յորս մարդիկդիւրաստաբաա են անկանիլ միշտ։ Նէ այս սխալանք է երկու ինչ, այսինքն՝ քանակութիւն և որակութիւն կերակրոց, և յուցանել անդէն զներգործութիւն նոցին՝ ի վերայ առողջութեան։

Արդարեւ չէ դիւրին հաստատել զճիշտ քանակութիւն կերակրոց պատշաճ ամենայն հասակի, սեռի և կազմուածոյ. սակայն ղդուշաւոր խնամ ըստ ամենայնի հարկաւոր է, և ուշնել միշտ՝ ի մոմ զգեղեցիկ զայն կանոն իմաստասիրացդ, որ ասէ. “Յամենայնի հարկ է՝ ի բաց կալ՝ ի վերջին ծայրէ և կալուլ միշտ զմիջնին, այսինքն՝ ըղձ չափաւորն։”

Մարդիկ ոչ երբէք դիտեն՝ ի չափել կամ՝ ի կշռել զկերակուր իւրեանց. քանզի բնութիւնն իսկ ուսուցանէ ամենայն մարդոյ զժամանակ քաղցու և ծարաւի և զչափ յագեցման, միայն այս սահմանեալ կարգ բնութեան թիւրի՝ ի շահագոյնն, որք ոչ զժամանակ և ոչ զչափ որոշեն երբէք։

Ծիւ և գլխաւոր և գերագոյն կանոն քանակութեան կերակրոց է չափաւորութիւնն, որոյ չափաղանցն մեծ վնաս գործէ, սակայն որակութեան կերակրոց արժանէ երկարաձիգ խորհրդածութեան. քանզի բազում են տարբերք եղանակք, որոց հնար է վնասակար առնել զկերակուրն։

Եղանակ տարւոյ, որոյ երբեմն գոլով սառուկ ցուրտ կամ ջերմ, ապականէ զերս արմատոյ կամ տընկոյ և ամենայն ինչ առնէ վնասակար, այլ այս է գործ Նախատեսչին, զոր սէրով և գոհութեամբ տանել պարտիմք. սակայն պրչամի և պրպխի պատճառ արժանի են անգութ և անխղճ տուր և առողք ուսանելոյ և ըմբռնելոց, որք վասն շահախնդրութեան անձին պէսպէս բազադրութեամբ ապականեն զվաճառ իւրեանց յորոց եթէ ոչ զգուշացին, մեծ վնասք պատճառին առողջութեան հասարակաց։

Սեղէն կամ բանջարեղէն կերակուրք յորժամ պահեցին ընդ երկար, չէ արժան ուտել, զի վնասակար է յոյժ։ Ամենայն անասնային գոյացութիւն և արմտիք գալարեալ ունին յատկութիւն նեխելոյ. եւ յորժամ պահեցին ընդերկար, նեխեցին անչուշտ զորս ուտէն մեծ վնաս պատճառէ առողջութեան։

Միս ցաւագոյ կամ սատակեալ անասնոց բնաւ մի ուտիլ, եւս և եթէ դիպուածով ինն սպանեալ լիցէ, որոյ արիւնն մեռեալ գոլով՝ ի մէջ մսոյն

յոյժ վնասէ առողջութեան։

Ընտրունք կամ ընտանի բադք, սագք, հաւք, խոզք, և այլն, որք փակեալ մնան ՚ի տան առանց ելջելոյ ՚ի բաց օդի, միս այսպիսեացդ է ըստ ժուարամարս և ոչ այնպէս անդադար որպէս կարծի ՚ի բազմոց։ Ուղեալ և ծախեալ միսք, որպիսի են կովու, ոչ խարի, խոզի, ձկան, հաւու, և այլն, պահեալ յաւուրս ինչ կամ յամիս, բազում անգամ պատճառեն բոր, քոս և այլ ախտ մորթոյ, որոյ դեղ է նախ՝ ՚ի բաց կալ յայնցանէ. և երկրորդ՝ ՚ի կիր առնուլ կաթն և բանջար և մարմնական կրթութիւն ՚ի բաց օդի։

Անդադար կերակրոց պարտ է լինել ոչ կարի հիւթալից, և ոչ կարի չոր և ցամաք։ Ո՛չ հիւթալից կերակուրն թուլացուցանէ զմարսակազմութիւնն և տկարացուցանէ զմարմինն։ Որպէս փորձիւ տեսանեմք զի իգականք՝ որք կեան յաւէտ թէյիւ և այլ լոյծ կերակրովք, առհասարակ նուազ են և անկարող՝ ի մարսել զսերտ կամ զպնդացնիւթ կերակուրս, յորմէ և յառաջգան ախտք արգանդի և այլ վնասակար հետեւանք։ Այլ ջուր և ցամաք կերակուրն խոտացուցանէ զմանձրապտոյն մսոյն մարմնոյ և մածուցանէ զհիւթս. ուստի և պատճառի տասպղտական ջերմն, բոր, քոս և այլ վնասակար ախտք։

Ըստ ազգաց արդէն խօսեցեալ են զվնասակար ներգործութենէ թէյի, և այն ոչ միայն զվատթար տեսակէ նորա, այլ և զանխոհեմ կիրառութենէ։ Ո՛չ բազումք սովորեալ են ըմպել զայս հեղուկ ՚ի ժամ առաւօտու իբրաքանչիւր աւուր նախ քան զճաշելն իւրեանց, որով խոպոռ բառնի քաղց նոցա, որ և անկասկած վնասէ առողջութեան։ Այնմ թէյն լոկ յընտիր տեսակէ և առանց չափաւոր քանակութեամբ, ոչ կարի թանձր և ոչ կարի ջերմ, և ոչ դառատարկ ստամոքսիւ, ոչ ունկնդի այնչափ վնասակար ներգործութիւն, այլ և գուցէ երբեմն ունկնդի օգուտ լինէ։

Յորմէ հետէ հնարեցաւ արուեստակեալ խահարաբուրթիւնն, ընդ նմին և գոյացան բազում վնասակար հիւանդութիւնք և սէտսէս ախտք և ցաւք. քանզի ամենայն ինչ, որ սէտսէս բազադրութեամբ չիւր խոկան ընծութենէ փոխի առ այլ, անհնար է այնը լինիլ անվնաս. զոր օրինակ, ՚ի հիւթոյ արմատոց, բուսոյ և սրնկոյ և պտղոյ յորժամ կազմեն ըմպելի ինչ, պնդիդ միանգամայն փոխին զբուրթիւնք և ներգործութիւնք նոցա։ Այսպէս լման և զբազադրեալ կերակրոյ, որք պատրաստին զանազան բազադրութեամբ, առնելով զիմուլ կամ բարկ համեմս, զղօրաւոր արգանակ, զհամեմեալ կերակուրս, աղեջուրս, թթուեղէնս և այլն, որք են կարի վնաս առողջութեան, մանաւանդ յաճախ ուտողաց։ Բանզի այսպիսիք են դրդռիչ արեան, յորդութեան մաղձի և մաղասի և զարթուցիչ ախորժակի անդր քան զչափ յագեցման, որք յաւէտ վնասեն։ Ոչ սակաւ զգուշաւոր մտադրութիւ մեր պահանջէ և հեղուկ սման սննդեան մերոյ, որ է ջուրն։

Ջուրն, որ է գլխաւորագոյնն ՚ի հեղուկս և կենսարար, կացուցանէ զմեծ սման զօրաւոր սննդեան մերոյ, ՚ի յիջուցանել զծարաւ և ՚ի կիր առնուլն յամենայն պիտոյս կենաց մերոց. պարտ է լինիլ ընտիր, յոյժ մաքուր և աղատ ՚ի խառնուածոյ օտար նիւթոց. զի յորժամ խառնեալ է ընդ այն օտար նիւթ ինչ, ծանրանայ և նշմարի ՚ի գունոյ, ՚ի հոտոյ, ՚ի համոյ և ՚ի ջերմոյ կամ ՚ի թոյլ զգայն որպիսութենէ. վասնորոյ չէ պարտ երբեք անզգուշա-

տանել յընտրել զջուր ըմպելեաց կամ ի պէտս կերակրոյ,զի լցէ այն թեթեւ և առանց իրիք յատկացեալ գոնոյ, համոյ և հոտոյ, որ կարի վնասակար է առողջութեան։

Խորքաքիչ ըմպելիք, այսինքն՝ օղի, զօրաւոր գինի և այլ արուեստականեալ ջերմաբնոյթ ըմպելիք, թէ և ի ժամանակս և ի դանդան տեղիս բանիւ և դրով դատապարտելոյ իբրեւ վնասակարք, սակայն տակաւին տեւեն, և գրեթէ հասարակաց ըմպելիք են յամենայն ուրեք, որ և օր աւուր առաւելուս դործածութիւն նոցին և յոչ ումեքէ խնայի երբեք, յորժամ կարէտակալ ծանր ծախուցն, վասն որոյ ի զուր է միանգամայն և վասն իմ, եթէ կամեցայց աշխատ լինել և խօսիլ ինչ ընդդիմութեամբ, միայն դուն գործեցիր օգնել ամենեցուն ընտրողութեամբ այնպիսի ըմպելեաց, որ ոչ տացէ ումեք վնաս աւնս տրտունջ բառնալոյ զմէնջ։

Այլ չափաւոր կիրառութիւն մաքուր և մեղմ ըմպելեաց վնասէ մարդոյ, այլ անչափն, և որ ինչ է ի վատ թար և յատկանեալ տեսակէ։

Խորքաքիչ ըմպելիք չեն մշտական ձաշակելիք,զի վնասեն ստամոքսի,անկարող առնեն և թուլացուցանեն զմարմինն։

Խաղումբ կարծեն թէ՝ ծանր աշխատութիւք առանց ի կիր առնելոյ զզօրաւոր ըմպելիս՝ չկարեն տակաւ երկար, բայց սխալէ այս կարծիքս յայժ, զի փորձիւ տեսանի ի զանազան ազգս, որք քնաւ ոչ ճաշակեն օղի, ոչ զգինի և ոչ ինչ զօրաւոր ըմպելիս, առաւել տանին ծանր վաստակս և երկար են ի կեանս քան զայնոսիկ որք սովոր են ի կիր առնուլ զայն յամենայն աւուր եթէ նախ և եթէ վինի վաստակոյ իւրեանց։

Զօրաւոր ըմպելիք դուցէ տան մարդոյ գործել առաւել քան զկարողութիւն իւր, բայց ոչ է այս տեւողական, զի փութով կորուսանէ նա զկարողութիւն իւր, և կանուխ հասանէ լքեալ հասակ ծերութեան։

Այսն է կարի հարկաւոր մեզ ընդարար կերակրոյ մերոյ, զոր դրեթէ աշխարհ ամենայն ի կիր առնուն և անթիւ մարդիկ առանց հոգի չը կարեն ապրիլ. վասն որոյ հարկ է զամենայն զգուշաւոր մտադրութիւն մեր նուիրել առ այս քաջառողջ և անդադար կերակուր, և ուշի ուշով դիտել, զի լցէ այն անարատ և ի մաքուր և յանփութ ցորենոյ պատշաճապէս պատրաստեալ, և ազատ յամենայն խառնուածոց. քանզի բազում հայցարարք առ ի շահ անձին դիտեն միայն հաճել զաչս հասարակաց քան փոյթ տանիլ առողջութեան նոցա. վասն որոյ ոչ խղճան երբեք խառնել ի նոյն զայլ ինասակար բաղադրութիւնս, որ զառողջութիւն հոգին փոխե առ անառողջութիւն. ուստի ճշտագոյն ընտրութիւն հոգի այն է զի ի մաքուր և ի նոր ցորենոյ պատրաստեալ լինի, ոչ կարի հաստ և ոչ կարի նուրբ, և բարւոք եփեալ և թրեալ։

Այն և ի մէջ բուսեղինոց և սերմնոց բազում տեսակք, զորս մարդիկ ի տեղիս տեղիս ի կիր առնուն եփեալ և անեփ փոխանակ հոգի, յորոց ոմանք են յայժ անդադարաբք և դիւրամարսք, որք են որիզ, գետնախնձոր,տեսղևն, ճակնդեղ, բողկ, կաղամբ, չողգամ և այլն։ Այն և ոմանք անդադարաբք,այլ քաղմատ և դժուարամարսք,որք են, ոլոռն, սիսեռն, բակլայ, ոսպ, և այլն։

(Շարունակութիւն)։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի 27ն Յունիսի տարկաւագութեան տօնին ընկալան Կարապետ Ց. Մարկոսեան Ըրտակերցի և Կարապետ Տ. Մինասեան Պարսիղակցի.

Սարկաւագ Սարգիս Պրուսացի
» » Յակոբ Կ. Պոլսեցի
» » Գրիգոր Տէրեվանքցի (ի կեսարիոյ)
» » Մկրտիչ Տիգրանակերտցի
» » Սահակ Կ. Պոլսեցի
» » Պետրոս Դուրտպէլէնկցի
» » Կարապետ Ըրտակերցի
Տէր Մխիթար քահանայ Մոկացի

Յովհաննէս վարդապետ.
Գաբրիէլ » »
Դանիէլ » »
Մաղաքիա » »
Յարգիս » »
Ըմբակում » »
Մամբրէ » »
Մխիթար » »

Ս. Ըթոռս իւր վարդապետ միաբանից թիւը աւելցնելով կը յուսայ ոչ միայն ամեն աթոռապատկան պաշտօնները անթերի և կանոնաւոր կերպիւ կատարել, այլ և ձեռնհասութիւն և միջոց ունենալ իւր մի ամենամեծ և նուիրական պարտքը կատարելու, որ է՝ ի պահանջել հարկին եկեղեցական պաշտօնեաները տալ Ազգ. Վարչութեանը, և ժամանակ առ ժամանակ քարոզիչներ ղրկել Հայաստանի գաւառներն և այլ հայաբնակ քաղաքներն ու աւանները, և այսպէս հայ ազգի ժողովուրդը միխիթարել հոգեւոր միխիթարութեամբ: Այն նուիրական պարտուց կատարումը խիստ զգալի է Ս. Ըթոռոյս Ամեն. Նա խոգահին և համբերին առաքելական Ովհաննի համար, ուստի և քաջայոյս ենք, որ ամենակարող աջակցութեամբ Խարբերդին պիտի յաջողուի պահել այս սուրբ իղձերը և վախճանները՝ ի հոգեւոր շինութիւն Ազգին և՝ ի պայծառութիւն Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցւոյ:

— Հատինք, ամսոյս 13ին, գիշերային նոր հրաշք մի գործեցին Ներղեհմի մէջ: Վառատնից սորը, որ, ըստ վաւերական հրովարտակաց, երեք ազգաց (Հայոց, Յունաց և Հատինաց) սեպհականութիւն է և հանգամանք պատճառաւ պարիսպը կիսատաքանդ մնացած էր, գիշերը գաղտնածածուկ ձանիւք նորոգեցին Հատինք և երկաթեայ դուռն կախելով ղարմացուցին բոլոր Երուսաղէմցիս. Հանգամանքին 1865 թուականը արձանագրելով պարսպի վրայ, որպէս թէ վաղուց շինած են: Այս հրաշքը կատարեցին այն գիշերը, երբ արդէն բացատութիւն եղած էր իրենց, որ բնաւ իրաւունք չունին Ս. Յակովբեայ տաճարին մէջ պատարագելու: Սակայն անտարակոյս ենք որ, Տէրունական սեմ. կուսականի և երկուց միաբանութեց կոզմէն ձեռք առնուած միջոցներով շուտով պիտի կործանի դիշերային հրաշալիքը եւ ցերեկեան լուսով նոր պարիսպ պիտի շինուի, իբրեւ անգամանութիւն երեք ազգաց:

ՅԱՆԿ

ՅՕԻԼԻՍ

Ներ ի հանդիսի պարգեւաբաշխութեան . 145
Սուրբ Տեղեաց խնդիրը . 153
Կարգադրութիւն առողջութեան . 162
Յամանակագրականք . 168

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ոլթածալ թղթով ։

Բ. Տարեկան դինն է երկու արծաթ մկճիակէ , հանդերձ Ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի ։

Գ. Ջատ տարակ առնել ազգաը , սիեսք է ամէն մէկ տեսրին չորս դահեկան վճարէ ։